№ 227 ՇԱԲԱԹ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 227

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaktion du journal „MSHAK".

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲԼԻ.

Հոկտեմբ. 1-ից մինչև նոյեմբ. 1-ը 85 կ.։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 8, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
Կը ներկայացնէ
Յայտնի դասական ողբերգութիւն ՍՈՓՈԿԼԷՍԻ
ԷԴԻՊ ԱՐՔԱՅ
5 արարուածով։
Պարիզի Comédie Française-ի միզանսցէնով.
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։
Տոմսակների գնից զեղչում ունենալու են միմիայն Հայոց Դրամատ. Ընկերութեան անդամները և աշակերտները։
ԱԶԴ.—Երկուշաբթի, հոկտ. 22-ին, առաջին անգամ «ՄԱՆՐ ՆՐԱԶ»—Լ. Քալանթարի.
Ռեժիսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
տտ. 765. 2—1

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ
Այսօր, հոկտ. 13-ին լոյս կը տեսնի «ՏԱՐԱԶԻ» հրատապ № 10 նուիրված ՀԱՅ ՏԱՌԻ 1500-ամեայ և ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 ամեայ ՅՈԲԵԼԵԱՆԻՆ։ Գինը մինչև հոկտեմբերի 10-ը բաժանորդագրվողների համար (մէկ) 1 րուբլի, լոյս տեսնելուց յետոյ 3 րուբլի։
Դիմել՝ ТИФЛИСЪ, Редакція „ТАРАЗЪ".
26. 6—6
Զեղչ ուսուցիչներին։ [illegible]

Տառերի գիւտի 1500 և տպագրութեան 400-ամեակների առիթով Կովկասի Հայոց Բարեգործակ. Ընկերութեան Խորհուրդը „Ալ. Պօղոսեան" ֆոնդով հրատարակած „Սուրբ Մեսրոպ" գիրքը՝ հեղ. ԼԷՕԻ, էջ 336, գինը 75 կ., վաճառում է 50 կ., ճանապարհածախսով 65 կ.։ Դպրոցներին, հիմնարկութիւններին և 30-ից աւել գնողներին 40 կոպ.։
Գումարով գնողների ճանապարհածախսը Խորհրդի վրա։ Արժէքը կարելի է ուղարկել նաև պօստային մարկաներով։ Դիմել՝ Тифлисъ, Абасъ-Абадская пл. д. № 7.
(2.) տտ. 758. 2—2

ԾԽՈՂԸ ԳԻՏԷ ՀԱՄԸ
ԱՆԻ ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ
10 հատը 6 կոպ.
25 հատը 15 կոպ.
Ակց. Ընկ. «ՄԻՐ» գործարանի։
(օ. մ.) տտ. 738. 10—5

ԲԺԻՇԿ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
փոխադրվեց «Փետրվարի 19-ի փողոցը» (նախկին Պէսկովսկայա) № 30.
Վիրաբուժական հիւանդութիւններ
ՄԱՍՆԱՒՈՐԱՊԷՍ՝ բժշկումն նորագոյն ձևով սեռամիզային գործարանների (սուր և քրօնիկական սուսանակի), միզափամփշտային քարերի՝ առանց վիրահատութեան (փշրելով), սեռական գործարանների անկարութեան (импотенція) և այլն, սիֆիլիսի 606 և 914-ով։ Թոքախտի բժշկումն վիրաբուժական միջոցով (արհեստական օդալանջաթաղանթ—искусств. пневмотораксъ) Forlanini, Brauer եւ այլոց ձեւով։
Ընդունելութեան ժամերը՝ առ. ժ. 12—1-ը, եր. 5—7-ը։
(ա.օ.) տտ. 761. 100—3

ՀՈՅԱԿԱՊ ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐ

Հայ ցեղի պատմութեան ամենախոշոր և ամենահոյակապ գործերից մէկն է հայկական գրերի գիւտը։

Նա հայ մտքի վերածնութեան ամենամեծ ազդակներից և հայկական կուլտուրայի ամենահիմնական տարրերից մէկն է։

Հայ գրերի գիւտով հայութիւնը ամենաամուր կամուրջ ձգեց իր և Արևմուտքի միջև, բարոյական կապ հաստատեց մտածող մարդկութեան գաղափարների և տրամադրութիւնների հետ։

Այդ լուսաճաճանչ գիւտով հայութեան համար ժողովրդական դարձան մի շարք թարմացնող և ազնուացնող բարոյական և հասարակագիտական գաղափարներ, որոնք առաջ միայն բացառիկ անհատութիւնների մենավաճառութիւնն էին կազմում։

Տառերի յայտնագործութեամբ սրբագործվեց հայ լեզուի իրաւունքը թէ մատենագրութեան և պաշտօնագրութիւնների մէջ և թէ դպրոցական կրթութեան ասպարէզում ու ազգային հաստատութիւնների փոխադարձ յարաբերութիւնների մէջ։

Մտքի, փիլիսոփայութեան, գաղափարների հոսանքը, որ գրերի միջոցով մտաւ յունական, ասորական և ապա եւրոպական մտաւոր աշխարհներից, չը թողեց, որ խաւար մարի հայութեան մէջ գիտակցութեան լոյսը, գաղափարականի հուրը։

Անցան դարեր, մեռան մարդիկ, բայց մատենագրութիւնը թողեց մեզ համար աւանդութիւններ նախնի գործողների և նրանց տենչերի մասին։

Տառապանքի և սարսափի դարերում անկարելի էր շատ բան զարգացնել հայ մատենագրութեան ասպարէզում. բայց այն, ինչ կարողացաւ դիմանալ և մնալ, ապացոյց է մարդկային հոգու անընկճելիութեան և յաւիտենական յոյսերի զօրութեան։

Հայութիւնը գրկաբաց կերպով ընդունեց և մի ուրիշ կարևոր գիւտ։ Դա տպագրութեան ներմուծումն էր հայ դպրութեան մէջ։ Տպագրութիւնը, որ մեր ժամանակի ամենազօրաւոր գործօններից մէկն է նորագոյն մարդկութեան հասարակական կեանքում, մուտք գործեց մեր իրականութեան մէջ չորս դար առաջ և սկիզբը դրեց հայ տպագրական գործին մեզանում։

Ողջունելով երկու յոբելեանները, մենք մի ջերմ իղձ և անձկալի փափագ ունենք, որ գրերի գիւտին և տպագրութեանը վերապահված խոշոր վերանորոգիչ զօրութիւնը տայ հայութեանը այն արգասաւոր արդիւնքները, որոնցով այնքան ճոխ է, բարգաւաճ և հզօր ներկայ դարի լուսաւոր մարդկութիւնը։

Ա. Քալանթար

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՏՕՆԸ

Այսօր, 1500 երկար և ձիգ տարիներ են անցնում այն թւականից, երբ հայոց եկեղեցու և ժողովրդի մի արժանաւոր զաւակը, Տարօն գաւառի Հացիկ գիւղում ծնված, Մաշտոց և յետոյ Մեսրոպ կոչված, հիմն դրեց հայ ազգի քրիստոնէական շրջանի քաղաքակրթութեան, հնարելով կամ, աւելի ճիշդն ասած, կատարելագործելով մի այլ նշանաւոր եկեղեցականի՝ Հայաստանի մեծ հայրապետ ս. Սահակ Պարթևի աջակցութեամբ, հայկական այբուբենը կամ գրերը։ Այդ նշանաւոր գիւտի առաջին հետևանքն այն եղաւ, որ նա ազգայնացրեց, հայացրեց քրիստոնէական կրօնը և եկեղեցին, հնարաւորութիւն տալով ժողովրդին լսել և կարդալ իր մայրենի բարբառով ժամասացութիւնը. իսկ երկրորդ հետևանքն այն եղաւ, որ նա ստեղծեց հայկական գրականութիւն և այդ գրականութեան ոսկեդարը։ Այդ գիւտը դասեց հայ ազգը նորից քաղաքակրթված ազգերի շարքում և իրաւունք տուեց հայ ժողովրդին պարծենալ, որ այն ժամանակ, երբ երկրագնդի այսօրվայ ամենաքաղաքակիրթ ազգերը ընկղմված էին խորին բարբարոսութեան և ագիտութեան մէջ, ինքը՝ հայ ազգը քաղաքակրթական ոյժ էր հանդիսանում 1500 տարի առաջ Ասիայում։

Ի հարկէ դժուար է հաստատապէս և անդառնալի կերպով պնդել, թէ հայ գրերի գիւտը տեղի է ունեցել ճիշդ 412 թ. Քրիստոսից յետոյ, քանի որ գիտութեան մինչև այժմ մեզ տուած տեղեկութիւնները անզօր են ընդունել այդ թւականը իբրև վերջնական, քանի որ կան բանասէրներ և քննադատներ, որոնք դեռ ապացուցված չեն համարում, թէ V դարի սկզբին է տեղի ունեցել հայ գրերի գիւտը։ Մի քանի տարի առաջ 404 թւականն էր համարվում գիւտի տարին, հետևաբար, կարող է պատահէր, որ գիտութիւնը երբեմն կը հանէ մի այլ թւական ևս։ Սակայն այդ հանգամանքը բնաւ չէ կասեցնում մեծ տօնի վեհութիւնը և պատմական անհագին կարևորութիւնը, որովհետև մի հարիւր տարի յետ կամ առաջ առանձին նշանակութիւն չունի։

Ուրեմն, ընդունելով 412 թւականը, իբրև մինչև այժմ ընդունվածը մեծամասնութեան կողմից, հայ ազգը այսօր մի առանձին հրճուանքով և պարծանքով պէտք է ողջունէ իր քաղաքակրթութեան մի հզօր ազդակի՝ հայկական գրերի գիւտի հնգետասաներորդ հարիւրամեակը, որի յոբելեանական տօնախմբութեան հանդէսները բացվում են և նաւակատիքը կատարվում է այսօր, ս. Թարգմանչաց տօնի օրը, Էջմիածնում և Օշականի եկեղեցում, ուր գտնվում է մեծ գործչի շիրիմը։

Պատմական այս մեծ տօնը՝ համազգային տօն է. այն հանգամանքը, որ Մեսրոպ-Մաշտոցը լուսաւորչական եկեղեցու վարդապետ է, ներկայ դէպքում չէ կարող դաւանական բնաւորութիւն տալ նրան, որովհետև նա ամենից առաջ քաղաքակրթական և համամարդկային կուլտուրայի հետ կապ ունեցող տօն է։

Պատմական այդ մեծ տօնի հետ կցված է այսօր և հայ քաղաքակրթութեան մի այլ հզօր փակտոր՝ հայ տպագրութեան հիմնադրութեան 400-ամեակի տօնախմբութիւնը։ Նորանոր հետազօտութիւնները ցոյց տուին, որ հայ տպագրութիւնը հիմնվել է տպագրութեան կամ Գուտտէնբերգի անմահ գիւտից հազիւ 60 տարի անց, եթէ ոչ աւելի վաղ։ Կը նշանակէ՝ այն ժամանակ, երբ նոյն իսկ հոլլանդացին, ամերիկացին, նորվէգիացին, ռուսը և եւրոպական ազգերից շատերը դեռ չէին ճանաչում Գուտտէնբերգի անմահ գիւտը, հայ ազգը այդ մեծ գիւտի գործադրութեան դրվելուց հազիւ 60 տարի անցած՝ ունէր իր տպած գիրքը, և այդ մի այնպիսի ժամանակ, երբ հայը քաղաքականապէս մի տկար, հալածեալ և թշուառ տարր էր հանդիսանում ու զրկված էր խաղաղ, անդորր կեանքի բարիքներից։

Հայ քաղաքակրթութեան երկու մեծ գործօնների միացեալ յոբելեանի տօնախմբութիւնը, որի սկիզբն է այսօր, կատարվելու է համազգայնօրէն և հանդիսաւորապէս եկող 1913 թ. հոկտ. 12-ին, մասնակցութեամբ ոչ միայն հայ, այլ և օտարազգի հայագէտների։ Եւ մենք մի ամբողջ տարի ունենք մեր տրամադրութեան տակ, որպէս զի անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնենք և կարողանանք արժանաւորապէս տօնել այդ մեծ յոբելեանը, որը պէտք է յաւերժացնել մի խոշոր ակտով։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը այդ խոշոր ակտը համարել է համազգային դպրոցական ֆոնդի հիմնումը։ Անշուշտ, դպրոցական ֆոնդը կարևորագոյն մի ակտ է, որ վաղուց պէտք էր իրագործել, և եթէ նա իրագործվի, մի յաւերժական կոթող կը լինի ի յիշատակ ազգային-պատմական մեծ տօնի։

Սակայն դպրոցական ֆոնդի հետ միասին մենք կարևոր ենք գտնում, որ մեր մեկենասները, մեր հարուստները նուիրաբերութիւններ անեն մի քանի կարևոր պատմական գործեր և ձեռագիրներ հրատարակելու, ինչպէս և ապահովելու Վիէննայի «Հանդէս Ամսօրեայի» հրատարակութիւնը, ի նկատի ունենալով որ այդ հանդէսը նուիրված է հայագիտական ուսումնասիրութիւններին։ Մենք կը ցանկայինք իրագործված տեսնել և Պարիզի համալսարանի հայագիտութեան ամբիօնի պրոֆեսոր Ֆրեդերիկ Մակլերի ցանկութիւնը՝ հրատարակելու Էջմիածնի նշանաւոր ձեռագիր Աւետարանը ֆոտոտիպով, ինչպէս հրատարակվեց Մոսկվայում 887 թւի ձեռագիր Աւետարանը, որովհետև այդպիսի մի հրատարակութիւն մեծագոյն լոյս պէտք է սփռէ հայկական գիտութեան վրա։

Թող հայ ժողովուրդը իր լումաներով ստեղծէ համազգային դպրոցական ֆոնդ ի յիշատակ ազգային մեծ տօնախմբութեան, իսկ մեր հարուստները, մեկենասները թող իրանց նուէրներով իրագործեն այն հրատարակութիւնները, որոնք գիտնական աշխարհի առաջ հայկական քաղաքակրթութեան մի մի կոթողներ պէտք է հանդիսանան։

Հ. Առաքելեան

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ*)

11 հոկտեմբերի

Վրանիա.—(Ճեպընթաց). Նովօ-Բազարը վերցվեց։

—

Կ. Պոլիս.—Լրագիրները մասնաւոր տեղեկութիւններից հաղորդում են, որ թիւրքերը մտնելով բուլգարական երկիրը՝ վերցրել են Կուստէնդիլը և ձեռք են ձգել իբր թէ 6000 գերիներ։

Մինիստրների խորհուրդը վճռեց բարձացնել, ի նկատի ունենալով պատերազմական ժամանակը, մաքսային տուրքերը 11-ից 14°/o-ի։

Գերմանական դեսպանը յայտնեց Նորատունկեանին, որ Գերմանիան չէզոք է մնալու բալկանեան պատերազմում։

Հոկտ. 9-ին մեկնեցին Ադրիանուպօլիս արտակարգ գնացքով զինւորական թղթակիցները։

—

Վիէննա.—«Կոր. Բիւրօյին» հաղորդում են Պոդգորիցայից, որ Տարաբաշ լեռների մօտ պատերազմական գործողութիւնները շարունակվում են։ Չորս կողմից շրջապատված թիւրքերի դրութիւնը աննախանձելի է։ Այն լուրը, թէ իբր թիւրքերը 20,000 զինւոր են կենտրոնացրել Սկիւտարում, չէ հաստատվում։

—

Վիէննա.—Քաղաքական շրջաններում սկսվում է յեղաշրջում յօգուտ այն հոսանքի, թէ Աւստրո-Ունգարիան չը պէտք է զինված միջամտութիւն գործէ բալկանեան պատերազմում դաշնակից պետութիւնների յաղթութեան դէպքում։

—

Աթէնք.—Եկան Ռուսաստանից 300 յոյն-կամաւորներ։ Եկել են նաև զօրքեր Սամոսից և Կրետէից։

Վէնիզէլոսը ընդունեց Պետ. Հեռ. Գործ. թղթակցին և պատերազմի նկատմամբ յայտնեց լաւատես կարծիք։

Կառավարութիւնը չէ ընդունում օտարազգի կամաւորներին։ Շուտով գալու են գարիբալդցիներ, որոնք միայն կընդունվեն։

—

Օդեսսա.—Յունաստան մեկնեց սանիտարական մի խումբ։

—

Պրագա.—Չեխերը զանազան միջոցներ են ձեռք առնում բալկանեան սլաւոններին օգնելու համար։ Սոկոլները բացին հանգանակութիւն։ Լրագիրները ժողովել են խոշոր գումարներ։ Կազմակերպված է բժշկական մշտական օգնութիւն։ Պատերազմի դաշտն են ուղարկվում սանիտարական խմբեր։

—

Բեռլին.—Բանկային շրջաններում հանգանակութիւն սկսվեց բալկանեան կռւող պետութիւններում սանիտարական ծառայութիւն կազմակերպելու համար։

---

*) Հեռագրաթելի փչանալու պատճառով Պետ. Հեռ. Գործակալութեան հեռագիրներ չը ստացվեցին ոչ հոկտ. 11-ի երեկոյեան, ոչ էլ երէկ առաւօտեան։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Արտասահմանեան լրագիրները տալիս են այն պահանջների լիակատար բովանդակութիւնը, որոնք զետեղված են եղել յանձնված բուլգարական վերջին նօտայում։ Այդ պահանջները, որոնք պարզապէս անընդունելի են Թիւրքիայի համար, հետևեալներն են.

1) Տալ ազգային աւտոնոմիա այն բոլոր ազգերին, որոնք ապրում են բոլոր թիւրքական կայսրութեան մէջ։

2) Համեմատական ներկայացուցչութիւն բոլոր ազգերից՝ օսմանեան պարլամենտում։

3) Թոյլ տալ քրիստոնէաբնակ նահանգներում քրիստոնեաներին ստանձնել հասարակական և պետական ամեն տեսակ պաշտօններ։

4) Քրիստոնեաների բոլոր տեսակի դպրոցների իրաւունքները ճանաչել հաւասար օսմանեան դպրոցների հետ։

5) Բ. Դուռը պիտի հրաժարվի քրիստոնեաների թիւրքացման փորձերից՝ քրիստոնէաբնակ նահանգները թիւրք գաղթականներ լցնելով։

6) Քրիստոնեայ նորակոչների համար պէտք է կազմվեն առանձին զօրամասեր. մինչև այդ պահանջի իրականացումը՝ քրիստոնեաների զինւորագրութիւնը դադարեցնել։

7) Եւրոպական վիլայէթների ժանդարմերիայի վերակազմումը՝ շվէյցարական կամ բէլգիական հրահանգիչների փաստական ղեկավարութեամբ։

8) Քրիստոնէաբնակ վիլայէթներում նշանակել շվէյցարական կամ բէլգիական գեներալ-նահանգապետներ, որոնք պէտք է հաստատվեն մեծ պետութիւնների կողմից. նոյն վիլայէթներում պիտի ստեղծվեն բնակչութեան կողմից ընտրված խորհուրդներ։

9) Մեծ-վեզիրատին կից պէտք է հիմնվեն բարձրագոյն խորհուրդներ, հաւասար թւով քրիստոնեաներից և մուսուլմաններից, այդ բարենորոգումների իրագործման վրա հսկելու համար. իսկ մեծ պետութիւնների և բալկանեան չորս պետութիւնների դեսպանները պէտք է հսկեն վերոյիշեալ խորհրդի գործունէութեան վրա։

Ներկայացնելով այս պահանջները, բուլգարական կառավարութիւնը յոյս է յայտնում, որ Բ. Դուռը այդ բարենորոգումները կը մտցնի երկրում 6 ամսվայ ընթացքում և իբր նշան համաձայնութեան՝ հրաման կարձակի զօրաժողովը դադարեցնելու, պահեստի զինւորներին արձակելու։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԻ ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԸ *)

(Մի էջ Դաշնակցութիւն կուսակցութեան աւանդական քաղաքականութիւնից)

V

Ով գէթ դիլլետանտի չափ ծանօթ է հասարակական կազմակերպութիւնների էվոլիւցիայի պատմութեանը, ով գոնէ հարևանցօրէն գիտէ եւրոպական պետութիւնների քաղաքական յեղաշրջումների պատճառակցական հիմքերը, նա առանց վարանման պիտի պնդէ, որ թիւրքական մետամորֆոզը (ինչպէս և չինականն ու պարսկականը) *) հասունացած արդիւնքը չէ՝ կուլտուրական յամառ ու բնական զարգացման, քաղաքակրթութեան հանրական ծաւալումների համապատասխան բարձր աստիճանի։ Մի յեղափոխութիւն էր դա, ուր կատարելապէս պասիվ վիճակի մէջ էր միլիօնաւոր զանգուածը և ճակատամարտի դաշտում ընդհարվում էին նախկին միապետական և նոր սահմանադրական զինավարժ գնդերը. երկրի քաղաքական վիճակը՝ դէպի աջ թէ դէպի ձախ՝ կախված էր հիմնապէս հակառակորդ բանակներից մէկի կամ միւսի զէնքի աջողութիւնից։ Դա յեղափոխութիւն էր ոչ թէ ժողովրդի միջոցով, ինչպէս գիտենք եւրոպական պատմութիւնից, այլ զօրքի միջոցով. դա յեղաշրջման փաստ էր ոչ թէ որպէս ներքին կեանքի հասունացած յարաբերութիւնների և լարված մօմենտների անխուսափելի լուծում՝ նախընթաց երկար շրջանի տարերային պատրաստութիւններից յետոյ, այլ դա արտաքին ճնշման և սեփական հայրենիքի վտանգման մի կենդանի ազդարար էր։

---

*) Տես «Մշակ» № 226.

*) Մենք պատրաստ ունենք մի ընդարձակ գրուածք, ուր տեսականօրէն լուսաբանվում ենք չինական, թիւրքական և պարսկական մետամորֆոզների ծագման պատճառները, որպէս առանձին տիպի յեղափ. երևոյթներ, ուստի այստեղ երկար կանգ չենք առնի այդ հարցի վրա։

Եթէ Թիւրքիան, Չինաստանը և Պարսկաստանը միայն մինչև զարգացման այն աստիճան, որ այդտեղ ևս կատարվէին եւրոպականի նման յեղափոխութիւններ՝ ժողովրդական մասսաների ակտիվ մասնակցութեամբ, այդ ժամանակ ոչինչ ինքնուրոյն չէր մնայ այդ երկիրներից։

Բռնակալական հին խախլած շէնքերը, իբրև համարեա գերիներ՝ միջազգային յարաբերութիւնների ցանցերում խճճված, տանում էին տալիս ազգային սեփականութիւններ անզգալի արագութեամբ. եւրոպական հզօրների գաղութային քաղաքականութեան կատաղի մրցման աննահանջ թափը՝ առևտրական նուաճումների ուղեցոյցով՝ կլանում էր ասիական տկար պետական մարմինների ծոցում թանգագին կտորներ։ Եւրոպական և ամերիկական կապիտալիզմը իր շահագործութեան ցանցերի մէջ էր առել երկրի բնական հարստութիւնները։ Երկրի տնտեսութիւնը քայքայվում էր օտար պարտքերի տոկոսների և անարխիական հարկ ու տուրքի ծանրութեան տակ։

Հայրենիքը վտանգի մէջ է, նա կորստի է մատնվում շատ մեղմ, խաղաղ, տարերային ընթացքով, բայց զգալի արագութեամբ։ Վտանգված հայրենիքը՝ եւրոպական տնտեսական շահագործութեան և քաղաքական ճնշման ներքոյ, փրկելու համար, պէտք էր գտնել նրա գոյութեան հիմքերը նոր, առողջ, ժամանակի պահանջներին համապատասխան նեցուկների վրա. ասել է՝ եւրոպական տարերային կլանումներին դիմադրելու համար՝ հարկաւոր էր զինվել եւրոպական իրաւակարգով ու քաղաքականութեամբ։

Այդ պատրիօտիզմի ճշտակի արտայայտիչները Թիւրքիայում՝ եղան երիտ.-Թիւրքերը։ Ո՞ւմ մէջ, ո՞ր խաւերում կարող էին մղել նրանք հայրենիքի ազատագրութեան պրօպագանդը հին բռնակալութեան երկաթէ բազուկներից. Նրանք փաստապէս անմատչելի էին Թիւրքական մասսային, իսկ վերջինս գաղափարապէս անկարող էր ըմբռնել ու հետևել երիտասարդներին։ Միակ կօնտինգենտը Թիւրք օֆիցերների շրջանն էր, իսկ սրանց միջոցով Թիւրք զինւորները։ Օֆիցերական կազմը՝ ծագումով նոյն խաւերից և կրթութեամբ նոյն մակարդակի վրա կանգնած, որքան երիտ.-Թիւրքերը, ասել է՝ շահագրգռութեան աստիճանով նոյնքան յօգուտ շարժման, որքան վերջինները, բնական է, որ նոյնքան տոգորէին պատրիօտիզմի նոր գաղափարներով, որքան եր.-Թիւրքերը։ Թիւրքական յեղափոխութեան նախապատրաստական պարագաները՝ իրանց նեղ ու սահմանափակ շրջանակների մէջ՝ աւելի շուտ նմանվում էին պալատական դաւադրութեան ակումբի, քան լայն ժողովրդական մասսաների ցայտուն շարժման և ցասկոտ բռնկումների։

Ուրեմն Թիւրք երիտասարդութիւնը 40-ական թւականների բուրժուական դեմօկրատիան չէր (ինչպէս Ֆրանսիայում և գերմանական երկիրներում) իր ծրագրային լայն հիմքերով, մարդկային իրաւունքների և քաղաքացիական ազատութիւնների վսեմ գաղափարներ պարունակող իր դեկլարացիաներով։ Երիտասարդ-Թիւրքերի իսկական կադրը պատկանում է՝ ծագումով ազնուական դասին, իսկ հասարակական դաւանանքով կանգնած են նրանք այն Թիւրք քաղաքացիական գրուպաների շահերի տեսակէտի վրա, որոնցից հետզհետէ կերպաւորվում է Թիւրքական բուրժուազիան։ Այդ գրուպաները՝ թէ իբրև տնտեսական կատեգօրիա և թէ իբրև հասարակական դասակարգ՝ նոյնքան անզարգացած են, կուլտուրական բոլորովին ցածր աստիճանի վրա կանգնած, որքան գռեհիկ է, նեղմիտ ու նեղահայեացք է, ցասկոտ ու Թունաւոր նրանց իդէօլօգների դաւանած նացիօնալիզմը։ Այդ նացիօնալիզմը մի տարօրինակ բաղադրութիւն է՝ եւրոպական «մօդեռն», ընդօրինակված շովինիզմի և ասիական հարազատ ինտօլերանտ ֆանատիզմի. իսկ իր քաղաքական տենդենցիաներով կրում էր այդ նացիօնալիստական իդէօլօգիան իմպերիալիստական և պանիսլամիստական ուժեղ գոյներ (յիշեցէք սրանից երկու տարի առաջ Կ. Պօլսի ոգևորված միտինգները երիտասարդների ձեռներէցութեամբ՝ յօգուտ եգիպտական մահմեդականների ազատամարտական ցոյցերի Անգլիայի դէմ. յիշեցէք երիտասարդ-Թիւրքերի պաշտօնական դեմօնստրատիվ հեռագիրը՝ ուղղված Վիլհէլմ II-ին, իսլամի բարձր պաշտպանի)։ Այդպիսի մի նացիօնալիզմ՝ իր նորագոյն շիկացած գոյներով՝ գոյութիւն չունէր հին ըէժիմի օրով. այնտեղ տոն էին տալիս ուրիշ հօսանքներ. միահեծան մօնարխիզմը և փաշայական ֆէօդալիզմը, իբրև տիրապետող ոյժեր, տեղ ու հնարաւորութիւն չէին տալիս բուրժուական նացիօնալիզմի գոյութեանն ու արտայայտութիւններին։

Ուրեմն ինքն իրան յեղափոխ. և սօցիալիստական յայտարարող Դաշնակցութիւնը Թիւրքիայում՝ ինքնաբերաբա՞ր, գիտակցաբա՞ր, թէ անգիտօրէն է երկարամեայ բարեկամական դաշն կռել երիտ.-Թիւրքերի նացիօնալիստական-պանիսլամիստական կուսակցութեան հետ։ Մենք նախազգում ենք, որ մինչև այս այրող կէտը մեզ ուշադրութեամբ հետևող ընթերցողը՝ այդ հարցով պիտի դիմէ մեզ։

Իսկ այդ հարցին չէ կարելի հասարակ «այո» կամ «ոչ» պատասխանը տալ։

Դաշնակցութեան Թէօրետիկները ըմբռնել ու ըստ հարկին գնահատել չը կարողացան սկզբում երևոյթի ողջ մեծութիւնը՝ իր առաջացման պատճառակցական հիմքերով և իր կրիչ ու առաջ-մղիչ ոյժերով, որովհետև նրանք զուրկ են հասարակական երևոյթները դասակարգային տեսակէտով սօցիօլօգիական անալիզի ենթարկելու մեթօդից, իսկ իրանց պատմահայեցողական էկլեկտիկան՝ չէր ներում ճշգրտօրէն ըմբռնելու երևոյթի էութիւնը։ Ուրեմն այս չափով թէօրիապէս, երևոյթի դեռ սկզբում, քանի չէին բացտրվել իթթիհադականների իսկական գոյները, անձար ու անգիտակից էր Դաշնակցութեան մտածողների ժընևեան կաբինէտը։ Իսկ յետոյ, երբ երիտ. Թիւրքերի կոմիտէն՝ հզօրագոյն մեխանիզմի ապարատները—զօրք թէ բիւրօկրատիա, կառավարութիւն թէ ոստիկանութիւն—փաստապէս իրան ստորադրեց, դարձաւ կառավարական կուսակցութեան և մինիստրական կաբինէտի ազդեցիկ ու կատեգօրիկ խորհրդատուն, ահա այդ շրջանում՝ գործնական փաստերի տարափը սահեցրեց Դաշնակցութեան մտածելակերպի ու գործելակերպի մէջ իսկական կլադերադաչ։ Այստեղ ահա, այդ անագորոյն պրաքսիսը վառեց Դաշնակցութեան վաղեմի քաղաքականութեան աւանդական թերութիւններն ու թուլութիւնները։ Յայտնվեց հօգեբանական առեղծուածների և կուսակցական սպեկուլացիաների երկարաձիգ շղթայի ծայրը։ Մրցութեան հրապարակը նետվեցին ծրագրային հետևողականութեան և գործնական օգուտների, սկզբունքային մաքրութեան և փաստական տիրապետութեան այրող հարցերը։

Ինչպէս միշտ, ինչպէս Կովկասում, այնպէս էլ Թիւրքիայում առաջինը պարտվեց երկրորդից. տեսական իդէալը զոհվեց կուսակցական գործնական շահերին, անջինջ աշխարհահայեացքը գետնատարած փռվեց վուլգար ուտիլիտարիզմի աքացող սմբակների տակ։ Դաշնակցութեան առաջ ցցվել էր դիլեմա և հրամայաբար պահանջում էր նրանից իր լուծումը։ Երկու ճանապարհներից մէկը ընտրել։ Կանգնել արդեօք սօցիալիստական ծրագրի (ընդունված 1907 թւականին, ինչպէս յայտնի է) գաղափարային բարձրութեան վրա. բայց դա կը նշանակէր ինքն իրան դատապարտել չափազանց նեղ շրջանակների մէջ կղզիացման վիճակի՝ ճնշման ու կէս հալածանքի, արհամարհանքի ու անհաշտ վերաբերմունքի՝ թէ հայ իրականութեան մէջ և թէ մանաւանդ հզօրագոյն իթթիհադականների կողմից (ինչպէս սովորաբար ամեն մի երկրում նման վիճակ ունեցել է սօցիալիստական կուսակցութիւնը իր սկզբնական շրջանում, իսկ Թիւրքական պայմաններում հօ աւելի վատ)։ Թէ՞ թևատարած փարել երիտասարդ Թիւրքերի կուսակցութեան պարանոցին, բարեկամական դաշն կռել նրա հետ, գործել նրա դիրեկտիւների համաձայն թէ հայ իրականութեան մէջ և թէ ընդհանուր քաղաքական-պարլամենտական հողի վրա, աշխատել կօնֆլիկտի չը բռնվել նրա հետ [illegible]։ Կուսակցութիւնը ընտրեց երկրորդ ուղին։

Իսկ գիտէք ինչ գործնական էքվիվալենտներ կունենար ծրագիր ու սօցիալիզմ փաստապէս Թաղող մի այդօրինակ տակտիկ Դաշնակցութեան կողմից. այն, ինչ Դաշնակցութեան 4-ամեայ Թիւրքահայ գործունէութիւնը վկայեց։ Նա հմայվեց ու մեծարվեց «Միութեան և Առաջադիմութեան» կոմիտէի ասպետ բէյերի կողմից. Նա նկատվեց, մի տեսակ, որպէս հայ ժողովրդի քաղաքական ներկայացուցչութիւն համա-Թիւրքական կեանքում առհասարակ և օրէնսդրական բարձր հաստատութեան մէջ մասնաւորապէս։ Նա իթթիհադականների էգիդայի տակ համարձակ փռեց իր գործունէութեան լայն փեշերը ամենուրեք։ Իսկ խղճուկ հայ ժողովուրդը՝ տեսնելով Դաշնակցութեան ոյժն ու ազդեցութիւնը շնորհիւ հզօրագոյն կառավարական կուսակցութեան՝ զանազան մօտիվներով ստորաքշում էր իրան Դաշնակցութեան հրամաններին՝ մասամբ երկիւղից, մասամբ յոյսեր տածելով նրա միջոցով իր վիճակը բարւոքելու։ Ինչպէս քաղաքական կեանքում, այնպէս էլ հայ հասարակական իրականութեան մէջ ստուարախիտ շարքեր գրաւելու և ամուր դիրքեր բռնելու հողը դարձաւ Դաշնակցութեան ձգտումների նպատակը,—ձեռք ձգել կուլտուրական-կրթական հաստատութիւնները և պաշարել ամենուրեք իր մարդկանցով։

Ահա Դաշնակցութեան սպեկուլանտ տակտիկը՝ իր արտաքերած «իւղոտ պատառներով»։

Intimus

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻ ԲԱՑՈՒՄԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Այսօր, նոյեմ. 13-ին, Էջմիածնում պաշտօնապէս սկսվում են հայ տառերի գիւտի 1500 ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ միացեալ յօբելեանական հանդէսները։

Այդ առիթով աւելորդ չենք համարում ստորև առաջ բերել այն ծրագիրը, որով սկսվելու են հանդէսներն Էջմիածնում.

Երէկ, նոյեմ. 12 ին, երեկոյեան Նորին Վեհափառութիւնը հանդիսաւոր Թափօրով իջաւ Մայր Տաճար, ուր տեղի ունեցաւ նախատօնակ ս. Թարգմանչաց յիշատակին։

Այսօր, շաբաթ, ս. Թարգմանչաց տօնին, նոյեմբերի 13-ին, հանդիսաւոր գնացքով Նորին Վեհափառութիւնը մեկնում է Օշական՝ ուղեկցութեամբ ամբողջ միաբանութեան և պատգամաւորութիւնների։

Պատարագ ս. Մեսրոպի գերեզմանի վրա։ Հայրապետական մաղթանք։

Պատարագից յետոյ պատգամաւորների բանախօսութիւնները, հեռագիրների և ուղերձների ընթերցում ս. Մեսրոպ եկեղեցու բակում։

Վաղը, կիրակի, նոյեմբերի 14-ին, Մայր Տաճարի Իջման սեղանի վրա կը կատարվի հանդիսաւոր պատարագ, ապա հոգեհանգիստ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։

Նոյն օրը պատարագից յետոյ կը լինի ցերեկոյթ երաժշտութեամբ և երգեցողութեամբ։

Շաբաթ և կիրակի երեկոները հրավառութիւն և երաժշտութիւն վանքի և ճեմարանի բակում։

Այս ծրագրով սկսվում է յօբելեանական տարին Էջմիածնում այսօրվանից, նոյեմ. 13-ից, և տևելու է մինչև 1913 թ. նոյեմ. 12-ը, երբ և նոյն ս. Թարգմանչաց տօնին, փակվելու է յօբելեանական տարին Էջմիածնում, ազգային հաստատութիւնների մասնակցութեամբ։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Համազգային տօնի առիթով՝ այսօր, առաւ. ժամը 10-ին Թիֆլիսի Վանքի աւ.-եկեղեցում կը կատարվի հոգեհանգիստ ս. Սահակ և ս. Մեսրոպ Թարգմանիչների յիշատակին։ Վաղը, կիրակի, նոյնպէս ժ. 10-ին առաւօտեան, նոյն եկեղեցում կը լինի հայրապետական մաղթանք։ Բոլոր հայ կրթական հաստատութիւնների աշակերտ-աշակերտուհիները իրանց ուսուցչական և հոգաբարձական մարմինների հետ Թիֆլիսի կօնսիստօրիայից հրաւիրվում են ներկայ լինելու հոգեհանգստին և մաղթանքին։

—

Յօբելեանական տարւայ ընթացքում դպրոցներում և այլ ազգային հաստատութիւնների մէջ կազմակերպվելու են երեկոյթներ, ցերեկոյթներ, համերգներ, դասախօսութիւններ ժողովրդի և աշակերտութեան համար. այլ և էքսկուրսիաներ դէպի Օշական։

Տարւայ ընթացքում լինելու է ժողովարարութիւն և դրամական նուիրատուութիւններ յօգուտ դպրոցական ֆոնդի։

—

«С.-Петерб. Вѣдомость»-ի նոյեմբերի 6-ի (№ 224) համարում տպված է մեր հայրենակից Միք. Ալլահվերդեանի մի մեծ առաջնորդող յօդուածը «Հայ ազգի երկու ազգային-կուլտուրական ակտերի յօբելեանը» վերնագրով, որով ծանօթացնում է ռուս հասարակութեան հայ գրերի գիւտի և հայ տպագրութեան պատմութեան հետ։ Յօդուածի վերջում հեղինակը՝ խօսելով Թիւրքիայի հայերի ծանր դրութեան մասին, ասում է, թէ նրանց նայուածքը յառած է քրիստոնէական մեծ պետութեան Ռուսաստանի վրա։

—

Հայ տպագրութեան և գիրերու գիւտին յոբելեանը պիտի կատարուի 10 օրէն Էջմիածնի մէջ։ Ինչպէս յայտնի է, հրաւէր եղած էր Պօլսոյ պատրիարքարանին, որպէսզի մասնակցի կատարուելիք հանդէսներուն։ Սրբազան պատրիարքը այս անգամ հրաւէր ուղղելով յանձնաժողովի անդամներուն, նիստը տեղի ունեցաւ նախագահութեամբ Դուրեան սրբազանի, բայց նկատելով որ երկրին պատերազմական վիճակին պատճառաւ անկարելի է գլուխ հանել յանուն հայ տպագրութեան կազմուելիք գումարը, կարևոր աշխատութիւններ հրապարակ հանելու և կրթական գործը քաջալերելու համար, գրով մը այս պարագաներն և յոբելեանի օրուան շատ մօտեցած ըլլալը հաղորդուեր է սրբազան պատրիարքին, բաղձանք յայտնելով միևնոյն ատեն որ պօլսահայոց մասնակցութիւնը տեղի ունենայ յառաջիկայ տարի, արժանաւորապէս տօնելու համար զայն։ («Բիւզանդիոն»)

—

Ստացանք «Տարազի» նոյեմբերի №-ը՝ ամբողջովին նուիրված հայ տառի և տպագրութեան։ Պատկերները ճոխ են։ Գարեգին վարդապետը յատուկ յօդուածով և 11 նկարներով պատմում է հայ տառերի զարգացումը։ Յօդուածներ ունեն Ստ. Մալխասեանց, Ատրպետ, Նիկ. վ. Տէր-Աւետիքեան, Լևոնեդ և այլն։ Յատկապէս «Տարազի» այս №-ի համար Բաբգէն վարդ.-ը լուսանկարել է Գէորգ V-ի պատկերը իր շքախմբով Օշականում, Մեսրոպի գերեզման-եկեղեցին, Օշականի ընդհանուր տեսարանը։ Կան բազմաթիւ գլխագրեր, ծաղկանկարներ, զարդագրեր։

—

«Տարազը» առաջարկում է Էջմիածնի Կենտ. Յօբել. Յանձնաժողով պրեզիդիումի մէջ մտցնել Վենետիկի և Վիեննայի Մխիթարեան կաճառների ներկայացուցիչներին, իբրև միայն անդամներ Կենտ. Յանձնաժողովին, և կայանալիք կօնգրէսի պարապմունքների մէջ մտցնել տառերի բարեփոխման խնդիրը։

—

«Աղբիւր-Տարազի» և Գրական-Գեղարվեստ. Սալօնի կողմից պատգամաւորներ են Էջմիածնում և Օշականում այդ թերթերի աշխատակիցներ՝ Յուսիկ արքեպիսկոպոս, Բաբգէն, Գարեգին, Ն. Տէր-Աւետիքեան վարդապետները և Գէորգեան ճեմարանի ուսուցիչներ Ստ. Կանայեան և Յար. Պետրոսեան։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Չորեքշաբթի, նոյեմ. 11-ին Թիֆլիսում կայացաւ հայ ազգաբնակութեան տարբեր խաւերի ներկայացուցիչների բազմամարդ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՈՐՈՒՄ ՇԱՏ ՏՈՒԱՒ՝ ՇԱՏ ԽՆԴՐԵՍՑԻ Ի ՆՄԱՆԷ»

Այսօր հայոց եկեղեցիները, դպրոցները և զանազան հիմնարկութիւններ ու խմբակցութիւններ տօնում են հայ ազգի գոյութեան ամենաէական ֆակտորների՝ ազգային այբուբենի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան սկզբնավորութեան 400-ամեայ յօբելեանները։ Այս օրվայ հանդէսները իսկապէս տօնակատարութեան սկիզբն են, նախատօնակը. բուն, հանդիսաւոր տօնախմբութիւնը, մի տարվայ պատրաստութիւնից յետոյ, տեղի պիտի ունենայ 1913 թվի նոյեմբերի 12-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը, Էջմիածնում։

Ազգային այբուբենի գիւտի մեծ նշանակութեան մասին մեր կեանքում՝ քանիցս անգամ գրել ենք և գուցէ դարձեալ առիթ ունենանք գրելու։ Այսօր, յօբելեանական տարվայ սկզբին, կամենում ենք կանգ առնել այն աշխատանքների վրա, որ այս մի տարվայ ընթացքում պէտք է կատարվին՝ համազգային մեծ կուլտուրական տօնը մի տարի յետոյ արժանավոր կերպով տօնելու համար։

Հարկավոր է նախ շնորհակալութիւն յայտնել Գէորգեան ճեմարանի մանկավարժական ժողովին և Էջմիածնի կենտրոնական Յանձնաժողովին, որոնց ինիցիատիվով ու աշխատութեամբ յօբելեանական տօնը այժմեան ծավալն ու կերպարանքն առաւ։

Էջմիածնի ծրագիրը, համեմատելով Թիֆլիսի յանձնաժողովի ծրագրի հետ, մի քանի հիմնական առաւելութիւններ ունի, որոնց պատճառով ամեն մի հայ, առանց որևէ խտրութեան, պէտք է յարի այդ ծրագրին և նրա իրագործման հետամուտ լինի։

1) Մինչդեռ Թիֆլիսի յանձնաժողովը, համաձայն ընտրողների ժողովի տված լիազօրութեան, պէտք է կազմակերպէր միայն հայերէն տպագրութեան 400-ամեայ յօբելեանը, Էջմիածնի Կենտր. Յանձնաժողովը այդ յօբելեանի հետ միացրեց շատ աւելի նշանաւոր և փառաւոր յօբելեան ևս՝ հայոց գրերի գիւտի 1500-ամեակը։ Տպագրութեան յօբելեանը տօնել, և մոռանալ հայոց ազգային գոյութեան հիմքը կազմող, հայ մտքի երկունքի հանճարեղ ծնունդը, ազգային այբուբենի գիւտի 1500-ամեակը՝ կը լինէր աւելի քան ապերախտութիւն. դա կը լինէր համազգային տխմարութիւն։

2) Նոյն Յանձնաժողովի խորհուրդն էր՝ ազգային յօբելեանների տօնախմբութիւնը կատարել Էջմիածնում, փոխանակ Թիֆլիսի և այլ քաղաքների։ Էջմիածինը լինելով հայութեան հին և նոր պատմական կենտրոն. լինելով հանդիսավայր, ուր գրերի գիւտի գաղափարը մշակվեց և իրագործվելուց յետոյ առաջին անգամ գործածութեան մէջ մտավ. լինելով ժառանգ և յաջորդ գրերի գիւտի և տպագրութեան անխոնջ և անմոռանալի մշակների՝ անշուշտ աւելի վայելուչ և պատշաճավոր տեղ էր այսպիսի մի ազգային տօնախմբութեան, քան Թիֆլիսը կամ ուրիշ քաղաքները, որոնք զուրկ են այս հմայքներից։ Բայց սրանից՝ երբ Էջմիածինը տօնի կենտրոնավայր դարձավ՝ ուրիշ քաղաքներ, խոնարհելով նրա հեղինակութեան առաջ, կամայ թէ ակամայ պէտք է տեղի տան և յետ կանգնեն անջատ-անջատ յօբելեանական տօներից, որով Կենտր. Յանձնաժողովի որոշած տօնախմբութիւնը Էջմիածնում կը հանդիսանայ արդարև համազգային տօն։

3) Նոյն Յանձնաժողովի խորհուրդն էր՝ յօբելեանների առիթով հիմնել դպրոցական ֆոնդ. այսպիսի ֆոնդը աւելի մեծ կարիքի պէտք է ծառայէ, աւելի ընդարձակ շրջան պիտի ունենայ և աւելի տևական կեանք ու հետևանքներ, քան Թիֆլիսի յանձնաժողովի ծրագրած ինքն ըստ ինքեան ցանկալի՝ գրականագէտների ֆոնդը։ Վերջինս կարող է հիմնվել և այլ առիթներով. այն-ինչ յօբելեանների առիթով պատշաճագոյն էր դպրոցական ֆոնդի հիմնարկութիւնը։

4) Վերջին, գուցէ և ամենակարևոր առաւելութիւնը Կենտրոնական Յանձնաժողովի այն է, որ նա գտնվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանավորութեան տակ, որ և հաստատում է նրա ծրագիրը ամենուրեք գործադրելու համար։ Այս հանգամանքի շնորհիվ Կենտրոնական Յանձնաժողովը պաշտօնական և ընդհանուր կացութեան համար ընդունելի դիրք է ստանում, որի կոչը ամեն տեղ—Պարսկաստանից մինչև Եգիպտոս և Ամերիկա—արձագանք է գտնում, որ յարմարութիւն է ստեղծում՝ իսկապէս համազգային տօն կազմակերպելու։ Եթէ մի քանի անձ Կենտրոնական Յանձնաժողովի այս դիրքն ի նկատ չառան և նոյեմ. 13-ի տօնի դէմ ոտնձգութիւն արին, սրանով ապացոյց տվին իրանց բարոյական կամ մտավոր տհասութեան։ Սրանց համար կարելի է ասել. «Տէր, թող դոցա, զի ոչ գիտեն զի՛նչ գործեն»։

Շնորհակալութիւն յայտնելով Կենտր. Յանձնաժողովին նրա խելացի ծրագրի պատճառով՝ չենք կարող սակայն ցավ չը յայտնել, որ Յանձնաժողովը իր ծրագիրն իրագործելու նկատմամբ հարկավոր գործունէութիւնը ցոյց չը տվեց։ Ամբողջ ամիսն անցավ՝ առանց որևէ շօշափելի պատրաստութեան այսօրվայ տօնի համար. նոյեմբերի 13-ի տօնի ծրագիրը միայն նոյեմ. 9-ին հասավ Թիֆլիս և բաժանվեց հիմնարկութիւններին. և եթէ հիմնարկութիւնները այդ խոստացված ծրագրին սպասելով ոչինչ արած չը լինէին, տօնակատարութիւնը՝ ծրագիրը ուշ հասնելու պատճառով՝ չէր կարողանայ գլուխ գալ։ Բացի սրանից՝ Կենտր. Յանձնաժողովը աններելի մոռացութեամբ հրավէր չէ ուղարկել Վենետիկի և Վիեննայի միաբանութիւններին՝ այս ազգային հանդէսին մասնակցելու համար։ «Մոռացութիւն» ենք կոչում, որովհետև Կենտր. Յանձնաժողովը չէ կարող չը գիտենալ, որ առաջիկայ յօբելեանները հայ-լուսավորչականների կրօնական հանդէսներ չեն, այլ պատմական-կուլտուրական տօն բոլոր հայութեան, որ օգտվում է հայ գրով, հայ տպագրութեամբ, ուր էլ որ լինի, ինչ դավանութեան և պատկանի։

Արդ՝ առաջիկայ տարում Կենտրօն. Յանձնաժողովը աշխատելու է խուսափել սխալներից և լրջօրէն պատրաստվել մեծ տօնախմբութեան համար։

Նախ և առաջ հարկավոր է բոլոր հայկական կարևոր կենտրոններում ստեղծել ենթայանձնաժողովներ, որոնք Կենտրոնականի հետ միշտ հաղորդակցութիւն պահպանելով՝ գործակցէին նրան ծրագիրը իրագործելու, տեղական հանդէսներ կազմակերպելու և աշխատանքի բաժանումով կենտրոնականի ծանր գործը հեշտացնելու։ Այսպիսի ենթայանձնաժողովներ պէտք է ստեղծվեն, ի միջի այլոց, Եգիպտոսում, Ամերիկայում, Պարիզում, Թավրիզում, չը խօսելով Թիւրքահայ կարևոր կենտրոնների և Ռուսաստանի մասին։

Առանձնապէս պէտք է խնդրվի Վենետիկի և Վիեննայի Մխիթարեանների մասնակցութիւնն և աշխատակցութիւնը, այն հիմնարկութիւնների, որոնք հայ գրի և տպագրութեան նվիրված պաշտօնեաներ են եղել հարիւրավոր տարիներով և նրանց զարգացման ու ծավալման համար աւելի մեծ դեր են կատարել, քան ուրիշ որևէ հիմնարկութիւն։

Պէտք է պատրաստել հայերէն գրերի գիւտի, գրի ձևի և այբուբենի զարգացման պատմութիւնը՝ շքեղ ալբօմի հետ միասին, որի մէջ նմանահանութեամբ բերված լինեն բոլոր տիպիքական օրինակները հայերէն գրի, սկսած ամենահին յիշատակարաններից մինչև մեր օրերի տպագրի և ձեռագրի նմուշները։

Պէտք է նմանահանութեամբ լոյս ընծայել առաջին հայերէն տպագիր Պարզատումարն ամբողջապէս, պատշաճավոր լուսաբանութեամբ այդ տպագրութեան տեխնիկայի, ինչպէս նաև նմուշներ ուրիշ ամենահին հայ տպագրութիւններից։

Պէտք է հրատարակել հանրամատչելի պատմութիւն հայոց գրերի գիւտի և հայ տպագրութեան, էժան գնով տարածելու հայ աշակերտութեան և ժողովրդի մէջ։

Պէտք է հոգալ՝ համազգային հանգանակութեամբ ս. Սահակի և Մեսրոպի արձանները (կամ արձանախումբը) պատրաստելու, որի համար հարկավոր է մրցութիւն նշանակել։

Պէտք է հիմնել մնայուն խմբագրական յանձնաժողով՝ գիտական հրատարակութեամբ հետզհետէ լոյս ընծայելու բոլոր հին հայ հեղինակները։ Այս խմբագրական յանձնաժողովին պէտք է յանձնել և շարունակութիւնը «Պատմագիրք հայոց» հրատարակութեան, որ հայոց գրերի գիւտի 1500-ամեակի առիթով սկսեց հրատարակվել Սուքիաս արքեպիսկոպոսի նպաստով *)։

---

*) Այս հրատարակութեան երկու հատորները՝ Ղազար Փարպեցի և Ագաթանգեղոս արժանավոր ընդունելութիւն գտան եվրոպացի և հայ բանասիրութեան կողմից թէ արտաքին վայելչութեամբ և թէ ներքին բարեխղճութիւններով։ Երրորդ հատորը, Մովսէս Խորենացի, բազմաթիւ ընթերցվածներով, վաղուց տպագրված պատրաստ է, պակասում է առաջաբանն ու յատուկ անունների ցանկը, որ յուսալի է՝ շուտով

ժողով, որ բացեց Հ. Առաքելեանը։ Առաքելեան բացատրեց, որ Թիֆլիս քաղաքի հայութիւնը եւ բարոյական պարտականութիւն ունի, միւս հայաբնակ կենտրոնների նման, անմասնակից չը մնալ այն մեծ համազգային տօնին, որ կատարվելու է համաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեան այս հոկտ. 13-ից մինչև 1913 թ. հոկտ. 12-ը հայ տառերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ միացեալ յօբելեանի առիթով։ Ներկայ ժողովը խորհրդակցելու է այն ձեւի մասին, որով Թիֆլիսի հայութիւնը եւ մասնակցելու է այդ նշանակալից հանդիսին։ Առաքելեան խնդրեց ժողովականներից ընտրել նախագահ և քարտուղար։

Ընտրվեց նախագահ Հ. Առաքելեան։

Նախագահը Գ. Մելիք-Ղարագեօզեանի, Ալ. Քիշմիշեանի և բժ. Ստեփանեանի հարցերին պատասխանելով լրացնում է իր առաջարկը՝ թէ 1912 թ. հոկտ. 13-ից մինչև 1913 թ. հոկտ. 12-ը, յօբելեանական տարի համարվող ժամանակաշրջանում, բոլոր հայկական հասարակական ու դպրոցական հաստատութիւններում և այլ հիմնարկութիւններում կարող են լինել տօնակատարութիւն, հանդէսներ։ Իսկ 1913 թ. հոկտ. 12-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը, մեծ շուքով փակվելու է յօբելեանը։ Մինչ այդ՝ պատրաստված կը լինեն գիտական հրատարակութիւններ հանդէսի մասին, իսկ հոկտ. 12-ին Էջմիածնում նախագծվում է գումարել հայագէտների ընդհանուր ժողով։

Բայց այս հոկտ. 13-ին Էջմիածնում կայանալիք հանդիսին Թիֆլիսի հայութիւնը պէտք է որ մասնակցէ՝ օրինակ յատուկ պատգամաւորութիւն ուղարկելով։

Ալ. Քալանթար կարծում է, որ բացի Էջմիածնի կազմած տօնակատարութեան ծրագրից՝ անհրաժեշտ է, որ ընտրվի մի մասնաժողով, որպէսզի նա զանազան հայաբնակ տեղերում կազմակերպէ դասախօսութիւններ, ռեֆերատներ, պրոյէններ յօբելեանի նշանակութեան մասին։ Կարելի է նաև հրատարակել հանրամատչելի բրօշիւրներ։ Մի խօսքով՝ մասնաժողովը պաշտօն է ունենալու մարմնացնել տօնի նշանակութիւնը ժողովրդական մասսաների մէջ։ Իսկ թող իր կարգին լինի դպրոցական ֆոնդը։

Գ. Մելիք-Ղարագեօզեան գտնում է, որ ներկայ ժողովը անձեռնհաս է ընտրել Թիֆլիսի մասնաժողով որևէ ծրագիր մշակելու համար։ Այսօր կարելի է ընտրել մի քանի պատգամաւորներ, որոնք Էջմիածնում կարող են ծանօթանալ այնտեղի Կենտրոնական Յանձնաժողովի մշակած ծրագրի հետ հանգամանօրէն և, վերադառնալով Թիֆլիս, կարող են հրաւիրել աւելի բազմամարդ ժողով իրանց տեղեկութիւնները իրազեկ անել տալու և նոր մի ծրագիր մշակելու համար։

Բժ. Կ. Ստեփանեան գտնում է, որ անպայման պէտք է ընդունել Էջմիածնի Կենտրոնական Յանձնաժողովի հեղինակութիւնը և վերջնական ծրագիր մշակելու նրա իրաւունքը։ Բայց Թիֆլիսում ընտրըվող մասնաժողովը, չունենալով բնաւ կարգադրութիւններ անելու ֆունկցիաներ, այլ լինելով սոսկ խորհրդատու Էջմիածնի Յանձնաժողովի ծրագիրը լրացնելու առաջարկութեան իրաւունքով, պէտք է իրաւամբ կազմակերպէ Թիֆլիսում ամբողջ տարվայ ընթացիկ տօնակատարութիւնը։

Ծուղուրեան ք. աւելորդ է գտնում պատգամաւորութիւն ուղարկելը, որի դիմաց կարելի է Էջմիածին շնորհաւորական հեռագիր ուղարկել։ Իսկ մասնաժողով հարկաւոր է ընտրել։

Նախագահը ձևակերպում է եղած առաջարկութիւնները և ժողովի հաւանութեանն է թողնում նախ՝ պատգամաւորութիւն ուղարկելու խնդիրը, որը լուծվում է դրական մտքով։ Որոշվում է նաև պատգամաւորների թիւը ընդունել 5—6 անձն տարբեր հոսանքներից։

Տրված անուններից շատերը հրաժարվում են և մնում են ընտրված հետևեալները՝ 1) Գ. Մելիք Ղարագեօզեան, 2) տիկ. Ս. Դանիէլ-բէկ, 3) Բարսեղ Առաքելեան, 3) հայր Մանդակունի, 5) Մինաս Սուլխանեան, 6) Հ. Առաքելեան, 7) Ալ. Քալանթար (վերջին երկուսը արդէն ընտրված էին ներկայացուցիչներ արտասահմանից)։

Ապա նախագահի առաջարկութեան համաձայն ժողովը ընդունում է մասնաժողով հաստատելու հարցը եւ բժ. Ստեփանեանի ձևակերպութեամբ և Ալ. Քալանթարի յարուցած պարտականութիւններով, որ ունենալու է Թիֆլիսի մասնաժողովը։ Թիֆլիսի մասնաժողովը անշուշտ մշտական կապ է պահպանելու Էջմիածնի հետ։

Մասնաժողովի անդամներն են՝ Առաքելեան Հ., Քալանթար Ա., Սպէնդիարեան Ց., Մալխասեանց Ստ., բժիշկներ Աղասաբեան, Ստեփանեան, Շխեան, Նաւասարդեան, Ղազաղեան և Բաքայեան Ա., Բաշինջաղեան Գ., Քիշմիշեան Ալ., Ղորղանեան Ց., Տէր-Սարգսեան, Մելիք-Ղարագեօզեան Գ., Մելիք-Ազարեան Ա., Միլեան Ա., Աֆրիկեան Խ., Սուլխանեան Մ., Շիրինեան Կ., Մամուլեան Խ., Բալաղեան Ս., Մկրտումեան Բ., Պալեան Մ., դերասան Աբէլեան Ց., տ. Մայսուրեան, Բենիկ վարդ., Սահակ ք. Սահակեան (Մոզնու միաբան), Ծուղուրեան ք., Երզնկեան Եզնիկ քահ., Տ. Նազարեան, տ. տ. Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկ, Ս. Դանիէլ-բէկ, Հ. Մարտիրոսեան, Հ. Առստամեան, օր. Կատ. Մուրադեան, տ. Ա. Պետրոսեան, կին բժ. Նաքաթեան։

Բժ. Բ. Նաւասարդեանի առաջարկութեան համաձայն՝ ժողովը յիշեալ մասնաժողովին թողեց հրաւիրել իր կազմը ուժեղացնելու համար նաև դրսից օժանդակ անդամներ։

Ցանկութիւն յայտնվեց նաև ի միջի այլոց, որ եթէ հնարաւոր է՝ որևէ կերպ համերաշխութիւն կապվի Թիֆլիսում գոյութիւն ունեցող յօբելեանական յանձնաժողովի հետ, համազգային այս մեծ տօնին մի կողմը թողնելով հայկական աւանդական անմիաբանութիւնն ու անհաշտութիւնը...

Ե.

Պէտք է վերջապէս դպրոցական ֆոնդի իրականացման և գործադրութեան մասին լուրջ հոգալ, որպէսզի նիւթական աջողութեամբ պսակվի և լաւագոյն կերպով գործադրվի։ Մեր դպրոցների կարիքները—նիւթականի միայն նկատմամբ—շատ-շատ են. ցանկալի է դպրոցների թիւը շատացնել, տիպար-դպրոցներ հիմնել, հմուտ ուսուցիչներ պատրաստել, հայերէն լեզվով քարտէզներ և ուսումնական պիտոյքներ հրատարակել, ուսուցիչների դասագինը աւելացնել... Բայց մենք այս բոլորի մէջ առաջին տեղը տալիս ենք ընդհանուր հայկական ուսուցչական թոշակարկղի հիմնարկութեան, որի կարիքը ստիպողական է և առաջացնելիք բարիքները թէ ուսուցիչների և թէ դպրոցների համար՝ ակներև։ Միւս կարիքները նոյնպէս պէտք է հոգացվեն. բայց նրանք կարող են գլուխ գալ նաև մասնաւոր ձեռնարկութիւններով, մըրցութեամբ, կեանքի պահանջների ազդեցութեան տակ։ Միայն ընդհանուր հայկական ուսուցչական թոշակարկղն է, որ իրագործվելու համար պահանջում է բարձրագոյն հոգևոր իշխանութեան նախաձեռնութիւնը և ընդհանուր ազգային մասնակցութիւնը։

Եթէ դպրոցական ֆոնդի գումարը (կամ նրա մի մասը, նայելով հաւաքվելիք գումարի քանակութեան), Կ. Հ. Բ. Ընկերութեան մօտ պահվող դպրոցական-ուսուցչական մօտ 80,000 ր. և մի քանի հիմնարկութիւններից սպասվելիք տարեկան նպաստները յատկացվեն ուսուցչական թոշակարկղին, մի անգամ ընդմիշտ հաստատուն հողի վրա կը հիմնվի այդ գանձարանը, որ կապահովէ մեր դպրոցների ներկայ և ապագայ բազմամեայ ծառայողների նիւթական դրութիւնը ծերութեան հասակում։

Այստեղ երկար կանգ չենք առնում այս խնդրի վրա։ Այսքանն ասելով՝ մենք նպատակ ունէինք յիշեցնելու, որ եթէ Կենտրոնական Յանձնաժողովը կանգ առնելու լինի ուսուցչական թոշակարկղ հիմնելու գաղափարի վրա, ապա շատ գործ ունի կատարելու, որպէսզի առաջիկայ տարվայ հոկտեմբերի 12-ին հաստատվի հայոց դպրոցների ուսուցչական թոշակարկղը յանուն ս. Սահակի և Մեսրոպի։ Այժմէն իսկ պէտք է կազմվի հմուտ մարդկանցից մասնաժողով, որ անմիջապէս ձեռնարկէ բոլոր դպրոցների ուսուցիչների մասին հարկաւոր վիճակագրական տեղեկութիւնները հաւաքելու, ռուսաց և այլ պետութիւնների նման թոշակարկղների կանոնադրութիւնները ուսումնասիրելու, դրամական բարդ հաշիվները կատարելու, թոշակարկղի կանոնադրութիւն մշակելու, որպէսզի առաջիկայ մեծ տօնի համար պատրաստ լինի։ Մի տարին հազիվ բավական լինի այս գործի համար։

Թէ թոշակարկղի և թէ մեր յիշած մի քանի այլ կէտերի առաջարկութիւններն եղել են մեզանից առաջ ուրիշներից. եւ եթէ մենք այստեղ այդ առաջարկութիւններն ամփոփեցինք՝ նրա համար է, որ ցոյց տանք, թէ որքան բազմաթիվ ու բազմատեսակ գործեր ունի կատարելու մի տարվայ մէջ Կենտրոնական Յանձնաժողովը, և որքան կարևոր է նշանավոր կենտրոններում հիմնել ենթայանձնաժողովներ՝ աշխատանքի բաժանման համար։

Կենտրոնական Յանձնաժողովի խելացի և եռանդոտ գործունէութիւնից է կախված 1913 թվի հոկտ. 12-ի ազգային մեծ տօնախմբութեան աջողութիւնն ու հմայքը։ Այդպիսի գործունէութիւն ցանկանում ենք նրան ի սրտէ։

Ս. Մալխասեանց

կը ստացվեն ու կը տպագրվեն։—Այս հատորի տպագրութեան հետ հասարակութեան հաշւով կը տրվի հրատարակութեան ելքի և մուտքի մասին։

ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆԱՐԽԻԱՅԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

Ինչու համար է մամուլը, ինչու համար են հասարակական ժողովները և կամ մասնաւոր խորհրդակցութիւնները։

Այս հարցերին գիտակից մարդիկ, թերևս նոյնիսկ և տգէտները կը պատասխանեն, որ մամուլը իսկապէս նրա համար է, որպէսզի նրանով հրապարակ գան կեանքի մէջ անլոյծ մնացած շատ ու շատ խնդիրներ, անդրադառնան նրա մէջ մեր կեանքում տակաւին հում մնացած բազմաթիւ հարցեր ու գործեր։

Նոյն մարդիկ անպայման պիտի պատասխանեն նաև, որ հասարակական ժողովներն ու խորհրդակցութիւնները անկասկածելի պարտաւորութիւններ ունեն մամուլում շաբաններով արտայայտված հասարակական բազմաթիւ այդ խնդիրները կռել, կոփել, սանկցիա տալ նրանց ու ապա թէ կիրառութեան անել։

Սակայն ո՞վ կարող է ուրանալ մեր կեանքի ներկայ անմխիթար իրականութիւնը. տխուր իրականութիւն՝ որ միշտ էլ ենթակայ է ձևականութեան միայն, որ իւրաքանչիւր շօշափված կամ յարուցված խնդիր թղթի վրա մնացած տառ է մնում շատ անգամ։

Հայերս իբրև մի հպատակ ազգութիւն՝ այնքան էլ հարուստ չենք մեր ներքին հասարակական ցաւերով ու հոգսերով։ Մեզ համար կանոնաւոր ընթացքի տակ դնելու խնդիրներ են ներկայանում գլխաւորապէս մեր դպրոցները, եկեղեցիները և սրանց կալուածները, որոնց մէջ եղած թերութիւնները, ըստ իս, դիւրին պէտք է լինէր վերացնել։ Բայց աւա՜ղ տես, որ իրանց մէջ լեզու և ազգութիւն բովանդակող մեր այս կենսալից գործօնները պահպանելու, նրանց սիստեմատիկօրէն շահագործման ենթարկելու մէջ անգամ թերանում և անընդունակ համայնք ենք հանդիսանում։

Հարցնում եմ, ինչու՞։ Որովհետև մեր ժողովուրդը կարծէք թէ հէնց դարերից ի վեր ընդունակ է աւելի ինսինուացիաներով, բանսարկութիւններով ու աղմուկներով զբաղվել, քան թէ իրական գործերով։

Որտեղ երկու հայ կայ, այնտեղ անշուշտ կայ և անմիաբանութիւն, կռիւ, բամբասանք։ Այնտեղ արդէն ամեն մէկը ուզում է ինքը իշխող լինել, ինքը մեծ հռչակվել, և կամ ինքը օրվայ հերոս համարվել։

Ամեն օր մենք տեսնում ենք մեր եկեղեցիները անկարգ և նրա պաշտօնեաների դրութիւնը աննախանձելի վիճակի մէջ, որոնց ապրուստի պայմանները երբէք ներկայ կենցաղին չեն համապատասխանում. բայց ո՞վ է հարցնողը կամ ո՞վ է հարցնողին լսողը։

Միշտ էլ ականատես ենք լինում այն երևոյթին, որ հայ քահանան ամենայն ճշդութեամբ ու հպատակութեամբ կանոնաւոր կերպով, որոշեալ ժամերին յաճախում է պետական դպրոցներում գտնվող հայոց աղօթատունը՝ այնտեղի հայ երեխաների համար ժամակարգութիւն կատարելու. որովհետև այնտեղ ուժեղ կերպով թագաւորում է դիսցիպլինան և կամ նկատողութեան ենթարկվելու երկիւղը։ Սակայն նոյն քահանան հայոց եկեղեցում իր հերթը և պատարագը կապալով է տալիս։ Եւ այս մասին հարցնող՝ ոչ ոք։

Այսօր տեսնում ենք, որ մենք մի բարեկարգ դպրոց չունենք։ Մեր դպրոցների վերաբացման օրերին հայ հասարակութիւնը իր ոգևորութիւններով ու ցնծութիւններով աշխարհը թնդացրեց, գրկաբաց ընդունեց իր իրաւունքների վերատացումը՝ խոստանալով դպրոցական համայնական տուրք սահմանել, խոստանալով ապահովել նրան իր պարտաւորիչ տուրքերով։ Իսկ այսօր։ Սակայն այսօր նոյն հասարակութիւնը իր անտարբերութեամբ մատնել է իր դպրոցները փակման վտանգին։ Ես շեշտում եմ, որ այսօր մեր ամենահարուստ համարված դպրոցն էլ փակվելու երկիւղի առաջն է կանգնած։

Այս այսպէս լինելուց յետոյ, դուք կը տեսնէք, որ եղածներն էլ իրանցից կատարելապէս քաոս են ներկայացնում։ Սակայն ո՞վ է տէրը, ո՞վ է տիրականը։

Ամբողջ աշխարհին յայտնի է, որ մեր դպրոցները եկեղեցական դպրոցներ են, կաթողիկոսն է նրանց տեսուչը, մարմնաւոր իշխանութեան առաջ նա է պատասխանատուն... Սակայն ո՞վ կարող է առարկել, որ այսօր մեր դպրոցներում անարխիա չէ թագաւորում, որ նրանցից մի քանիսը ինքնավար դպրոցներ են, տարբեր ծրագիրներով, տարբեր ուղղութիւններով, տարբեր կարգերով ու սիստեմներով։

Այո, դպրոցները եկեղեցական են, նրա անունով բացված, իսկ այդ եկեղեցին՝ կամ նրա գլուխը տեղեկութիւն չունի այնտեղ թագաւորող բեժխեժի մասին։

Մանաւանդ դուք կը տեսնէք, որ մի դպրոցում դասից առաջ աղօթքն է ասվում, իսկ միւսում բացակայում է այն, և շատ ու շատ այսպիսի անհեթեթութիւններ։

Այսօր ազգի Հայրապետը, դպրոցների տէրը հրահանգում է 1500 և 400-ամեակների մեծ տօների հանդէսները հոկտեմբերի 13-ին փառաւոր կերպով դպրոցներում կատարել. սակայն, ինչպէս լսվում է, մի քանի համբակ ու սանձարձակ ուսուցիչներ դժկամակում են Հայոց Հայրապետի հրահանգը ի կատար ածել։

Եւ այսպէս շատ ու շատ տակնուվրայութիւններ։ Եւ դեռ կան մարդիկ, որոնք հայ ժողովրդով պարծենում, հայ ժողովրդին առաջադէմ ազգ են համարում ու սպասում, որ հայ հասարակութիւնը մի օր իր համար գարուն կը բերէ, մի օր իր համար բարեկարգ վիճակ կը ստեղծէ. Երջանիկ օրեր։

Բենօ

ՄԻ ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամսիս 10-ին, չորեքշաբթի երեկոյեան, քաղաքային դումայի դահլիճում կայացաւ կովկասեան հայ-գրականագէտների ընկերութեան առաջին ընդհ. ժողովը, Յովհ. Թումանեանի նախագահութեամբ։ Ժողովի սկզբին գաղտնի քուէարկութեամբ 18 հոգի նոր անդամներ ընդունվեցին։ Ժողովին մասնակցող բոլոր անդամների թիւը 35 էր։

Նախքան օրակարգի հարցերին անցնելը, Մ. Ջմշկեանը խօսք առնելով առաջարկեց՝ 1) Թարգմանիչների և նրանցից յետոյ բոլոր մահացած հայ-գրականագէտների յիշատակը ոտքի կանգնելով յարգել։ 2) Որոշել այդ ընկերութեան ամբողջ գոյութեան ընթացքում Թարգմանչաց տօնի օրը ընկերութեան հիմնադրութեան տարեդարձը համարելով՝ ամեն տարի շքեղ հանդէսով տօնել։ 3) Այժմս և եթ ընդհանուր ժողովի կողմից հեռագրել Էջմիածին և շնորհաւորել իսկապէս զուտ գրականական ազգային հանդէսը։ 4) Ի յիշատակ ընկերութեան հիմնադրութեան, ինչպէս և հանդէսների զուգադիպութեան պատճառով, մի ժողովածու հրատարակել, որից գոյացած արդիւնքը յատկացնել աղքատ գրականագէտների ընտանիքներին և նրանց թողած ձեռագիր երկերի հրատարակութեան։

Այս առաջարկներից վերջին երեքը վաղաժամ համարելով, ժողովը մերժեց, իսկ Թարգմանչաց և մինչև այժմս վախճանված հայ-գրողների յիշատակը ժողովականների կողմից ոտքի կանգնելով յարգվեց։

Տ. Յովհաննիսեանը յայտնեց, որ Ս. Շահազիզը և Պ. Պռօշեանը առաջինն են եղել այստեղ մի ընկերութեան միտք արծարծող, ուստի առաջարկեց և նրանց յիշատակը յարգել։

Ապա տեղի ունեցաւ վարչութեան անդամների ընտրութիւնը. գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին Յովհ. Թումանեան, բժ. Զարգարեան, Լէօ, Ե. Լալայեանց, Ա. Յարութիւնեան, Տ. Յովհաննիսեան, Ա. Աթանասեան, Գ. ք. Աղանեան, իսկ անձնափոխանորդ՝ Ց. Ալիխանեան։ Միւս հարցերը և ընտրութիւնները յետաձգվեցին հետևեալ ժողովին կատարելու։

Ժողովի վերջում Գ. Վարդանեանը գրականագէտներին վերաբերող հետևեալն առաջարկեց. «Առաջիկայ կիրակի Բօլնիս-Խաչէն գիւղում Ղ. Աղայեանի անուան բացվելիք գրադարանի հանդէսին ընկերութեան կողմից մասնակցել և հանգուցեալ Աղայեանի յիշատակը ոտքի կանգնելով յարգել»։ Այդ առաջարկը միաձայն ընդունվեց։

«Մշակի», «Աղբիւր-Տարազի», «Հովիտի» և «Խաթաբալայի» խմբագիրներից և աշխատակիցներից ոչ ոք չէր մասնակցում այս ժողովին։

Հետաքրքիր

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Աւազակութիւնը Սղնախի օկրուգում

Սղնախ, 28 սեպտեմբերի

Նորերս աւազակների մի խումբ Ալազան գետի կամուրջի մօտ յարձակվեց անտառի պահապանների վրա, խլեց նրանցից հրացաններ և անյայտացաւ անտառում։ Նոյն աւազակները ցանկացել են փախցնել տաւար՝ Ալազանի ճանապարհի վրա, բայց տաւարատէրերը և ուրիշ ճանապարհորդները արգելում են։

Արբօշիկի գիւղից փախցրին 17 տարեկան վրացի մի օրիորդ։ Փախցված աղջկան գտան Մաղարօ գիւղում մի պառաւի մօտ։

Թէ քաղաքում և թէ գաւառում շարունակվում է սպառնական նամակների ուղարկելը։ Շանտաժիստները դադար չեն տալիս խաղաղ ժողովրդին։ Մօտ օրերս Ալազանի այն կողմը Նիկողայոս Ամիրխանեանի ջրաղացն են գալիս հինգ զինաւորված լեզգիներ և ստիպում են ջրաղացպանին երկու նամակ գրել՝ մէկը Նիկողայոս Ամիրխանեանի անունով, պահանջելով նրանից 5000 ր., իսկ միւսը իշխ. Ե. Վաչնաձէի անունով, որից պահանջում են 600 ր.։ Այս նամակները կնքում են իրանց ձեռքի կնքով և տակը ստորագրում են իրանց անունները և տեղը, որտեղից որ են։ Նամակներն ուղարկում են անտառի պահապանի միջոցով և սպառնում են, որ Ն. Ամիրխանեանը ուղարկէ մէկ հրացան և 300 փամփուշտ։ Լեզգիներից չորսը հագած են ունեցել շատասկի չօխա, իսկ հինգերորդը՝ կարմիր չուխա՝ ուսադիրներով։

Խաչվերացի պասին երկու զինաւորված մարդ—մէկը հրացանով, իսկ միւսը ատրճանակով—մի օր երեկոյեան գնում են Ս. Մայսուրաձէի տունը, որտեղ ապրում է վաճառական Րիզա Շայխմելօվը, սկսում են դուռը ծեծել և պահանջում են՝ «Գիգան 200 ռուբլի դուրս բերէ, թէ չէ բոլորին կը կոտորենք»։ Պատշգամբի վրա կանգնած երկու փոքրիկ տղաները բարձրացնում են լաց ու աղաղակ։ Շայխմելօվը պատուհանից երկու անգամ արձակում է հրացան, բայց չի դիպչում. աւազակները փախչում են. փողոցում սպասելիս է եղել երրորդ չարագործը. Շայխմելօվի և նրա ծառաների ցուցմունքներով, ոստիկանութիւնը կալանաւորեց Մ. Վարդանեանին և Վ. Գոգերիձէին։ Երրորդն անյայտ է։

N. N.

Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը

Նոր-Բայազէտ, 3 հոկտ.

Պետական դումայի ընտրութիւնները արդէն սկսվել են մեզանում։ Գիւղական կուրիաների կողմից, որ տեղի ունեցան սեպտ. վերջերին, ընտրվել են առայժմ երկու պատուիրակ, այն է Փաշաքենդ գիւղացի Մամադ Դաշտոյեանց և Այրիվանք գիւղացի մօլլա Միր-Ալի Սէյի-Հուսէյին օղլի, որը կրօնուսոյց է մեր քաղաքային դպրոցում։

Իսկ երէկ, ամսիս 2-ին, տեղի ունեցաւ մեր քաղաքի մի պատուիրակի ընտրութիւնը։ Քաղ. ձայնաւորները թէև թւով շատ էին, բայց քուէարկողները 150 հոգի միայն մասնակցեցին ընտրութեանը, որի արդիւնքը զրօ դուրս եկաւ, քանի որ ոչ ոք չընտրվեց։ Առանց նախնական ժողովների կամ թեկնածուներ որոշելու և պրոպագանդա մղելու, «գեօր-մաղ, բիլմազ», ամեն ոք մի անուն էր գրում իր թերթիկում և գցում արկղը, որի մօտ նստած էին մասնաժողովի անդամները և նախագահ Գ. Արծրունին։

Միւս օրը, հոկտ. 3-ին, բաց անելով արկղը դուրս եկան 10-ից աւելի անուններ զանազան դասակարգերից, արժանի և անարժան մարդիկ (մէկը նոյնիսկ ղասաբ—սալահ—որին դուցէ զաւեշտութեան համար էին ձայն տուել), որոնցից շատերը իսկի երազումն էլ չէին մտածել ընտրվելու։ Այդպիսով, ուրեմն, բոլոր 150 ձայները բաժանվելով 10 տեղ, դուրս եկաւ ամենամեծ թիւը 57, որ ստացել էր մեր հայրենակից երդ.-հաւատարմատար Սենեքերիմ Արծրունին, որ դարձեալ ընտրված չէ համարվում՝ կէսից պակաս ձայն ստանալով։ Ուստի ոչ ոք ընտրված չը համարվելով, քաղ. աւագը հեռագրով յայտնեց Երևանի նահանգապետին ի տեղեկութիւն, որև շուտով նշանակվելու է նոր ընտրութիւն այդ վերաբերութեամբ, որի առիթով արժէր նախապէս խորհել-խորհրդակցել, թեկնածուներ ճարել, անարժանը և արժանաւորը որոշել և կենտրոնանալով մի երկուսի վրա, ապա քուէարկել։ Ապա թէ ոչ՝ բուխտու-բարախտ ամեն մարդ իր բարեկամին, իր ծանօթին կամ իր ընկերոջ գրելով, առանց նրա արժանաւորութեան չափը ի նկատի առնելու, և արկղը նետել—ոչինչ արդիւնքի չենք հասնի։

Ոսսորդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի փոխարքան Պետերբուրգում երկար խօսակցութիւն է ունեցել Թիֆլիսի պօլիտեխնիկումի վերաբերութեամբ ներքին գործերի և ժող. լուսաւորութեան մինիստրների հետ։

◆ Այսօր երեկոյեան ժամը 7-ին քաղաքային դումայի դահլիճում տեղի կունենայ առաջադիմականների ժողովը՝ խորհրդակցելու վաղվայ ընտրութիւնների առիթով։ Վաղը ընտրութիւնները կը սկսվեն առ. ժամը 9-ից դումայի դահլիճում։

◆ Թիֆլիսում կովկ. ուսումն. շրջանի հոգաբարձուն բանում է մարմնամարզութեան դասընթացքներ միջնակարգ դպրոցների ուսուցիչների և վարժուհիների համար։ Դասընթացքների կազմակերպութեան համար յատկացված է 3400 ռուբլի։

◆ Վաղը, կիրակի, Բօրչալուի գաւառի Բօլնիս-Խաչէն գիւղում տեղի կունենայ հանգուցեալ Ղազ. Աղայեանի յիշատակին հիմնած գրադարան-ընթերցարանի պաշտօնական բացումը։

◆ Թիֆլիսի նահանգապետը պաշտօնական գործերով մեկնեց Թիոնէթի գաւառը։

◆ Թիֆլիսի ժողովարանը մասնագէտներից մի մասնաժողով է հաստատել, որ զբաղվելու է ժողովարանի սեփական շէնութիւն կառուցանելու հարցով այն տեղում, ուր առաջ գտնվում էր եղբ. Նիկիտինների ցիրկը։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը ստացել է Թիֆլիսի ժողովարանից 400 ր., որից 300 ռուբլի չքաւոր աշ.-աշակերտուհիներին Ընկերութեան աշակերտական ճաշարանից ճաշ տալու համար, իսկ 100 ռուբլին չքաւոր աշակերտների համար դասական պիտոյքներ գնելու։

◆ Տիգրան Աֆրիկեանը բացի այն 4700 ռուբլուց, որ իւրաքանչիւր տարի տալիս է Կ. Հ. Բ. Ընկերութեանը՝ գաւառական հայոց դպրոցներին նպաստելու համար, ներկայ 1912—13 ուսումն. տարվանից այդ նպաստը աւելացրել է դարձեալ 600 ր., որ տրվելու է Ալէքսանդրօպօլի շրջանի Մեծ-Բէյթի և Շարուր-Դարալագեազի շրջանի Երդափին գիւղերի դպրոցներին՝ իւրաքանչիւրին 300-ական ռուբլի։

◆ Այս հոկտ. 15-ից ձմերային երթևեկութեան հետ միասին ուղղակի հաղորդակցութիւն է հաստատվում Թիֆլիսի և Մոսկվայի միջև Ռոստով-Կոզլով Ռեազանի վրայով։

◆ Շուտով ռուսական երկաթուղագծերի վրա երթևեկելու են յատուկ դրամ փոխադրելու համար պատրաստված վագոններ։

◆ Այսօր Հասարակական ակումբում երեկ. ժ. 8-ին կը լինի սինեմատոգրաֆ, որ ցոյց է տալու գիտական պատկերներ։

◆ Վաղը Զուգուրէթի յունաց եկեղեցում կատարվելու է մաղթանք կռուող բալկանեան սլաւօնների զէնքի աջողութեան համար։

◆ Թիֆլիս նահանգի ազնուականութեան պարագլխի պաշտօնի համար հրաժարվեցին քուէարկվել իշխ. Բագրատիօն-Դաւիդովը և իշխ. Սումբատովը։

◆ Արձակ ազատեցին կալանաւորած պատուիրակ Բէբուրիշվիլիին և քաղաքային ծառայողներ Ռօյլինին, Մակեդօնսկիին և Լօնգիպյին։

◆ Վրաց դրամ. ընկ. անդամների ընդհանուր ժողովը նշանակված է հոկտ. 28-ին։

◆ Թոյլատրված է խաղալ կովկասեան բեմերի վրա վրացերէն «Երեք մօր որդին» դրամ. պօէմա 4 գործ. հեղ. Լէօ Կիաչելիի։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական Տան թատրոնում

Լ. Անդրէեվի «Մեր կեանքի օրերը» 4 գործ. պիէսը, հայերէն թարգմանութեամբ, հինգշաբթի, հոկտեմբերի 11-ին ներկայացվեց Ժողովրդական Տանը հայկական սեկցիայի նախաձեռնութեամբ։

Պիէսի բովանդակութիւնը արդէն ծանօթ լինելով ընթերցողներին, կանգ չենք առնի դրա վրա։ Միայն մի երկու խօսք կասենք խաղի մասին։

Կենտրոնական դերերը կատարում էին պ. Գալստեան (ուսանող Գլուխօվցեվ) և տիկին Ցասմիկ (Օլգա), որոնք իրանց լուրջ մտածված խաղով կարողացան դուրս գալ իրանց ստանձնած պատասխանատու դերից։

Տիկ. Զաբէլ (Օլգայի մայր) բաւական տիպիկ էր։

Միւս դերակատարներից պ. պ. Տէր-Առաքելեան (պաշտօնաթող գեներալի և բժշկի դերերում), Փիրումեան (ուսանող Անուֆրիյ) և Լաքա (ուսանող Բլօխին) նոյնպէս խաղում էին մտածված և կատարեցին իրանց դերերը աջողութեամբ. վերջինս աւելի տիպիկ կը լինէր, եթէ իր դերը այնքան էլ կօմիկութեան չը հասցնէր։ Պ. Ցարութիւնեան (ուսանող Միշա) իր դերին տալիս էր աւելի նշանակութիւն, քան թէ էր, և ձեռքերը տեղի-անտեղի շարժում, որից պէտք է խուսափէ։

Միւսները պահպանում էին անսամբլը։

Հասարակութիւնը վարձատրում էր դերակատարներին երկարատև ծափահարութիւններով։

Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր։

Վելումեան

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

I

Զօներ մեծ յօբելեանի առթիւ. «Տիպ ու Տառ»: հայ տառերու գիւտին 1500-ամեակի և հայ տպագրութեան չորեքդարեան կրկնակ յօբելեաններուն առթիւ (412—1512—1912). գեղարուեստական տիպ, 180 պատկերներով զարդարուած. կազմեց Թէոդիկ. Կ. Պոլիս, 1912. հրատարակութիւն և տպագրութիւն Վահրամայ և Հրաչէի Տէր-Ներսէսեան։

Շատ յարմար ժամանակին է հրատարակվում այս գիրքը, որ մի ստուար աշխատութիւն է «Տիպ ու Տառ» վերնագրով, բաղկացած 24 մեծադիր և մանրատառ հոծ պրակներից, որոնց 21 հատն է լոյս ընծայված մինչև այժմ։ Թէոդիկի այդ գեղեցիկ երկը՝ մի ձօն գեղարուեստական գործ է, հրատարակված ի պատիւ ազգային-պատմական մեծ յօբելեանին, և այդ յօբելեանին պատիւ բերող գործ է։ Տպագրութիւնը ընտիր, փղոսկրեայ թղթի վրա, վերին աստիճանի խնամքով և գեղարուեստօրէն է կատարված. գեղեցիկ են մանաւանդ 180 պատկերները, որոնք զարդարում են այդ գործը։ Շատ գեղեցիկ տպաւորութիւն է գործում հայ տպագրիչներու նահապետ՝ «Մեղապարտ Ցակոբի» ոսկեզօծ պատկերը, որ յղացել է Վ. Զարդարեանը։

Հեղինակը՝ Թէոդիկ, որ արդէն ծանօթ է հայ բանասէր հասարակութեան իր «Ամենուն տարեցոյցը» հանրագիտարանով և օրացոյցով, անհագին ջանք և աշխատութիւն է գործ դրել ներկայ աշխատութեան վրա, որպէսզի կարողանայ մեծ յօբելեանին արժանաւոր մի ձօն լոյս ընծայել։ Եւ նրա ջանքերը լիակատար աջողութեամբ են պսակվել, որովհետև նրա հրատարակած գործը, արդարև, ազգային մեծ յօբելեանին արժանի գործ է։

Առաջին մասում հեղինակը համառօտաբար ծանօթացնում է «գիրի» ծագման պատմութեան հետ, բերելով և զանազան նշանագիրերի, մեհենագրոշմների, բևեռագրերի և հանգուցալար գրերի նմուշներ. ապա նա խօսում է «ձեռագիրների» մասին, բերելով նոյնպէս օրինակներ գըրչագրերից։ Անցնելով տպագրութեան, նա խօսում է փայտափորագրութեան (կսիլօգրաֆիա), անթաց տպագրութեան և ապա անմահ Գուտտէմբերգի գիւտի մասին, որ տեղի ունեցաւ 1453 թ., ու տալիս է տպագրութեան զարգացման և տարածման ընդհանուր պատմութիւնը աշխարհիս զանազան երկիրներում։ Այս երկի երկրորդ մասը նուիրված է հայ աշխարհին և հայկական այբուբենի գիւտին. առաջ են բերված գրերի բոլոր տեսակները՝ երկաթագիր, նօտրագիր, պարզ-բոլորգիր, շղագիր, պարզգլխագիր, «անթըք»-գլխագիր, «նօտման»-գլխագիր, շեղ-գլխագիր, իթալիք, գօթիկ և այլն, ինչպէս և կենդանագիր, ծննդագիր, ձագագիր, փառագիր, փակագիր, զարդագիր, ծաղկագիր, շղագիր և այլն։ Խօսելով նաև պատկերագործութեան, պղնձագրութեան, փայտագրութեան, փորագրութեան, գինկագրութեան, գալուանաձուլման, վիմագրութեան մասին, հեղինակը առաջ է բերում հայ շքեղ տպագրութիւնների ցուցակը, ապա խօսում է հայ տպագրութեան պատմութեամբ զբաղողների՝ հ. Եղիշէ ծ. վ. Գաֆթանեանի, հ. Գարեգին վ. Զարպհանէլեանի, հ. Արսէն վարդ. Ղազիկեանի, Հրանտ Ասատուրի, Վ. Զարդարեանի, Ա. Այվազեանի և այլոց մասին։

Երրորդ մասը, որ կրում է «Հայ տպարանը երկիրէ երկիր» վերնագիրը և ամենամեծ ու ստուար մասն է, պարունակում է զանազան երկիրներում բացված հայ տպարանների պատմութիւնը, սկսեալ առաջին տպարանը հիմնելու տարուց, այսինքն 1512 թ., մինչև ներկայ 1912 թիւը, այն է Իտալիայում, Թիւրքիայում, Լեհաստանում, Ֆրանսիայում, Պարսկաստանում, Հօլանդիայում, Ռուսաստանում ևայլն։

Գրքի մէջ զետեղված են տպարանական բոլոր գործիչների պատկերները, ինչպէս և Օշականի, Զարխափանի, Ամենափրկիչ և մի քանի այլ նշանաւոր վանքերի պատկերներն ու լուսանկարները, թւով 180 հատ։

Հետաքրքրական են Տէրվնցի Ցովհաննէս քահանայի և իր որդի Խաչատուրի—որոնք հիմնեցին Հռոմում 1583 թ. հայկական տըպարան—և Ագուլեցի Խօջա կամ վաճառական Նահապետ Գուլնազարի, որ հիմնեց Վենետիկում տպարան 1687 թ., պատկերները։

Կարելի է հաստատապէս ասել, որ հայ մատենագրութիւնը ճոխացաւ մի ընտիր, գեղարուեստօրէն պատրաստված երկով, որ միևնոյն ժամանակ մի գեղեցիկ զարդ կարող է լինել ամեն մի գրական սրահի համար։

Հ. Առաքելեան

II

Ազգապատում, հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, գրեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, պրակ 1, Կ. Պոլիս, հրատարակութիւն Վ. և Հ. Տէր-Ներսէսեան, 1912 թ.։

Օրմանեան սրբազանի նոր գործը, որ բաղկացած է լինելու 20 պրակներից և ամեն մի պրակ 10 տպագրական թերթերից՝ քառածալ և երկէջեան, այն է 160 էջերից, և որի առաջին պրակը միայն այժմ լոյս է տեսել, ձօնված է նոյնպէս ազգային մեծ յօբելեանին։ Թողնելով այս նշանաւոր աշխատութեան մասին խօսել, երբ ամբողջ գործը կը հրատարակվի—մի գործ, որ համոզված ենք՝ հայ բանասիրական և պատմական գրականութեան ամենամեծ գանձերից մէկն է լինելու—պէտք է այժմ առաջ բերենք միայն նախագիտելիքի վերջին պարբերութիւնը։

«Վերջին գիտողութիւն մըն ալ։ Պաշտօնապէս հրատարակուած է, որ ներկայ 1912 տարւոյ հոկտ. 13-ին հանդիսաւորապէս տօնախմբուի հայ տպագրութեան չորրորդ հարիւրամեակը և հայ գրութեան հնգետասաներորդ հարիւրամեակը, և ամեն բանասէրներ կը փութան իրենց ձօնը բերել այդ կրկնակ սրտագրաւ և ազգօգուտ ձեռնարկներուն, և իրենց երկասիրութիւնները կը նուիրեն նոյն կրկնակ յիշատակներուն։ Երկուքին ալ կեանք տուողը Հայ Եկեղեցին է, երկուքին ալ ույժ տուողներ հայ եկեղեցականներ են. մեր սոյն գործն ալ ներքին անձուկ կապերով միացած է անոնց հետ։ Գեղեցիկ զուգադիպութեամբ մը մենք ալ ճիշդ այդ միջոցին կը ձեռնարկենք գործիս հրատարակութեան. թող այս ալ ընդունուի իբր մեր համեստ նուէրը Ազգային Եկեղեցւոյ պայծառութեան և ազգային գրականութեան զարգացման ձօնուած»։

Այս նշանաւոր գործի հրատարակութեան ծախքը յանձն է առել Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանը, ինչպէս երևում է գրքի երկրորդ էջի վրա տպված այս ազդից.

«Գերապատիւ և սրբազան Տ. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանց, երեցագոյն եպիսկոպոսական դասուն, որ շատ հրատարակութեանց և ձեռնարկութեանց օժանդակած է առատ նուիրատուութիւններով, ինքնայօժար յանձնառու եղած է սոյն հրատարակութեան ծախքերը հոգալ ի պատիւ սուրբ եկեղեցւոյս և ի վայելումն ազգիս հայոց»։

Ամեն մի պրակ առանձին ծախվում է և գինն է 50 կոպէկ, իսկ ամբողջ գործի արժէքն է 10 ռուբլի։

Հ. Ա.

III

Մաշտոց-Մեսրովպը, հայոց տառերի և տպագրութեան գիւտը և սկզբնաւորութիւնը մեր ազգի մէջ, աշխատասիրութիւն Գրիգոր աւագ քահանայ Մանդակունւոյ, Թիֆլիս, 1912 թ.։

Այս գրքոյկը, որ նոյնպէս ձօնված է մեծ յօբելեանին, բաղկացած է ընդամենը 32 էջերից։ Հեղինակը տալիս է հայ գրերի գիւտի՝ Մաշտոց-Մեսրովպի համառօտ կենսագրութիւնը և գրերի գիւտի պատմութիւնը այնպէս, ինչպէս աւանդում են մեր հայ պատմագիրները, առանց որևէ քննադատական վերլուծութեան։ Ապա նա տալիս է և հայ տպագրութեան պատմութիւնը, համարելով առաջին հայ տպագրութիւնը կատարված 1565 թ. դպիր Աբգարի ձեռքով, մինչ այսօր յայտնի է, որ առաջին տպարանը և տպագրութիւնը հիմնվել են Վենետիկում 1512 թւին։

Գրքին կցված են ս. Մեսրոպ-Մաշտոցի, Գուտտենբերգի և ներկայ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ V-ի պատկերները։ Գինն է 10 կոպ.։

Հ. Ա.

IV

1500 տարի առաջ (404—1904), հայոց տառերի գիւտը, Իսահակ Ցարութիւնեանի, Թիֆլիս, 1904 թ.։

Հայ բանասէր Իսահակ Ցարութիւնեանը 1892 թ. հրատարակեց մի ընդարձակ աշխատութիւն «Հայոց գիրը» վերնագրով, որի մէջ մանրամասն փաստերով նկարագրել է հայոց այբուբենի գիւտի պատմութիւնը և ցոյց տուել, որ նա տեղի պէտք է ունեցած լինի 404 թ.։ Եւ այդ հիման վրա ընդունելով 1904 թւականը հայոց տառերի 1500-ամեայ տարեդարձ, նա հրատարակեց այդ թւին իր աշխատութեան համառօտութիւնը՝ ընդհանրութեան մատչելի ձևով։ Թէև, ինչպէս վերևում ասացինք, այժմ հայոց տառերի գիւտի աւելի ճիշդ թւականը համարվում է ոչ թէ 404, այլ 412 թ., բայց Իսահակ Ցարութիւնեանի աշխատութեան արժէքը դրանով չէ նուազում, ուստի և մենք յանձնարարելի ենք գտնում նրա այդ գրքոյկը՝ ժողովրդական և աշակերտական ընթերցանութեան համար, որովհետև նա պարունակում է մի համառօտ ակնարկ գրի և գրի տեսակների մասին ընդհանրապէս և հայոց այբուբենի գիւտի պատմութիւնը՝ հիւսված հայ պատմագիրների մատեաններից։

Հ. Ա.

Անօգուտ չենք համարում յայտնել, որ մենք ևս 1904 թ. ի յիշատակ հայոց գրերի 1500-ամեակի (404—1904 թ.) ձեռնարկեցինք հրատարակել «Մեսրոպեան Հանրամատչելի Գրադարան» վերնագրով մի շարք գրքեր, ինչպէս և «Հանրագիտական բառարան», որ դեռ չէ վերջացած և որը նոյնպէս ձօնված է ազգային-պատմական մեծ դէպքի յիշատակի յաւերժացման։ Հետևաբար, այդ մեծ տօնի՝ 1500-ամեայ յօբելեանի տօնախմբութեան գաղափարը յղացվեց ոչ թէ այս տարի, ինչպէս ոմանք աշխատում են ցոյց տալ և նոյնիսկ վերագրել գաղափարը մի անհատի, այլ նա ծագել է դեռ 1904 թ., բայց չիրագործվեց իրար յաջորդող անակնկալ դէպքերի պատճառով։

Հ. Ա.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Սօֆիայից հաղորդում են, որ թիւրքերը պայթեցրին այն գնացքը, որով տեղափոխում էին բօլգարական զինւորներ։ 2000 մարդ սպանվեցին։

◆ Ադրիանուպօլսի բերդերը վերցնելու ժամանակ զոհվեցին 3000 բօլգար. 20,000 թիւրք գերի ընկան։

◆ «Н. Вр.»-ին հեռագրում են, որ չեռնօգորցիների արքայազն Դանիլօն թիւրքերից գերի է ընկել։

◆ Պետերբուրգի գործարաններում կազմակերպվում են բողոքի միտինգներ բալկանեան պատերազմի դէմ։ Բանաձևերը տպագրվելու են արտասահմանեան կուսակցական հրատարակութիւնների մէջ։

◆ Ուրալի արքունի թնդանօթային գործարանները, մայրաքաղաքի լրագիրների ասելով, ձեռք են բերել ֆրանսիայի դրամատէրերը։

◆ Բօլգարիան ձեռք է բերել մի քանի ստորջրեայ նաւեր։

◆ Հաստատվում են Աւստրիայի, Իտալիայի և Թիւրքիայի դաշնակցութեան լուրերը, որ հետամուտ է կռիւ մղել բալկանեան պետութիւնների դէմ։

◆ «Веч. Вр.»-ն ամենաստոյգ աղբիւրից հաղորդում է, որ Վիլնայի զինւորական շրջանի հրամանատար գ. ադ. Բէննէնկամֆը նշանակվում է Կիէվի զին. շրջանի զօրահրամանատար։ Գեն. ադ. Իվանօվը Կիէվից փոխադրվում է Մօսկվա զօրահրամանատարի պաշտօնով գեներալ Պլեվէի տեղ։

◆ Բելգիական զինւորական մինիստրութեան տեղեկութիւնների համաձայն Գերմանիան փութանակի զօրքեր է կենտրոնացնում ֆրանսիական սահմանագլխում։

◆ Բերլինի արուարձանում կայացաւ 200,000 սօցիալիստների ժողով, որ բողոքեց պատերազմի դէմ և պահանջեց Աւստրիայից չէզոք մնալ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ճանապարհորդութիւն մօտօրանաւակով Ամերիկայից Պետերբուրգ.—Մօտ օրերս մի այդպիսի ճանապարհորդութիւն կատարեց ամերիկական «Թիավար» հանդէսի խմբագիր միստէր Դէյը 2 երիտասարդ ուղեկիցների հետ։ Նրանք հեռացան Ամերիկայի ափերից մի փոքրիկ կայմաւոր մօտօրանաւակով, կտրեցին Ատլանտեան ովկիանոսը, մտան Նէվայի գետաբերանը և կանգ առան Պետերբուրգեան գետափին։

արխասիրտ ճանապարհորդները գործ էին ածում միայն սառն կերակուր և կրակ չէին վառում՝ վախենալով պայթեցնել իրանց հետ եղած բենզինի ահագին պաշարը (200 պուդից աւելի)։ Ուղեգնացութեան գլխաւոր վտանգն էին կազմում սառցալեռները, սակայն ծովագնացները աջողութեամբ խուսափում էին նրանց հետ ընդհարվելուց։ Մրրիկը երկիւղալի չէր այդ փոքրիկ զբօսանաւի համար։ Միստէր Դէյի ասելով, փոթորկոտ օրերը ճանապարհորդների համար հանգստեան օրեր էին, որովհետև փոթորիկների ժամանակ մօտօրը կանգնեցնում էին և իրանք անձնատուր լինում տարերքի կամքին։

Նաւագնացութեան ամենադժուար շըրջանը խիզախ ծովագնացները համարում են նաւարկութիւնը մրրկածուփ Բալտիկ ծովով։ Այդ ծովի փոքր ալիքը շատ աւելի վտանգաւոր է, քան Ատլանտիկի ամենամեծ ալիքները։ «Ծովը,—պատմում է Դէյը,—ներկայացնում է մի իսկական եռուն կաթսայ. մեր նաւակը շպրտվում էր տաշեղի նման»։

Ինքը նաւակը, որ կատարեց այդ անօրինակ ճանապարհորդութիւնը, մի քիչ միայն մեծ է սովորական մօտօրաշարժ զբօսանաւերից։ Նրա ցռուկի մասում շինված է մի պստիկ տնակ և մառան ջրի ու ուտեստի պաշարով, իսկ ջեկի կողմը՝ մեքենաների բաժանմունքը։

Սակայն տարօրինակն այն է, որ ծովագնացների ամենածանր զրկանքը միստէր Դէյը համարում է ծխելու անհնարինութիւնը. խիզախ ամերիկացիները ստիպված էին 11,000 վերստաչափ ճանապարհի ընթացքում ձեռք քաշել իրանց չիբուխներից, որովհետև ծխելը վտանգ էր սպառնում բենզինի պաշարի բռնկման։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ГОЛОВНЫЯ БОЛИ вызываются очень часто запоромъ, который можно легко устранить примѣняя

СКАВУЛИНЪ

пилюли безъ запаха и вкуса, превосходно регулирующія отправленія кишечнаго тракта.

Важная перемѣна. Количество пилюль въ коробкахъ „Скавулинъ" значительно увеличено безъ повышенія цѣны.

(В. 37692)

600 ԱՌԱՐԿԱՆԵՐ 3 ՌՈՒԲԼԻ 90 կոպ.

փոխանակ 25 ռուբ.

Մեր ֆիրմայի հետ ծանօթանալու համար մենք ուղարկենք միայն այս լրագրի ընթերցողներին 600 հատ օգտ. և արժէք. առարկ., որոնցից գլխաւորն է՝ գրպ. անկեր. ժամաց. 10 տ. երաշխիքով, ոսկէ դուբլէ-շղթայ, աղամ. և կան. ոսկէ դուբլէ-մատանիներ ամերիկ. ադամանդով, նոյն յատկութ. ապարանջան, մանեակ և ականջօղեր (200 ր. արժէք ունեցողից չը զանազանվող), կաշուէ դեղ. պօրտմօնէ, նէսէսեր և 500-ից աւելի հետաքրք. օգտ. առարկ.։ Բոլոր 600 առարկ. համար վերցնում ենք միայն 3 ր. 90 կ. (ժամաց. առանձին արժէ 6 ր.)։ Վերադիր վճ. ուղարկ. համար ճանապարհածախք հաշվում է՝ 1—3 զարն. համար 55 կ., Սիբիր՝ 95 կ.։ Չը հաւանած դէպքում յետ ենք վերցնում և փողը վերադարձնում։ О-во „МЕРКУРІЙ", ЛОДЗЬ. Л. 61.

(Л. 11649) 6—2

ՀՐԱՒԷՐ

Ս. Կարապետ եկեղեցու բոլոր չափահաս ծխականները կիրակի, ամսիս 14-ին, առաւօտեան ժամը 11-ին, երրորդ և վերջին անգամ հրաւիրվում են նոյն եկեղեցու ծխական ընդհանուր ժողովին՝ ընտրելու երեցփոխ և քննելու հանգուցեալ երէցփոխի հաշիւները։

Գործակալ՝ Ղեւոնդ ք. Մամիկոնեան

764. 1—1

ԽՆԴՐՎՈՒՄ Է

խնամել կամ որդեգրել

կատարեալ որբ

ՄԻ ՀԱՅ ԵՐԵԽԱՅԻ

9 տարեկան, ներկայումս առանց որևէ խնամատարութեան։ Հասցէն՝ Բեհթղեհէմի փողոց № 45, հարցնել Հայկ Պետրոսեանին։

762. 2—2

Ընտրութիւններ Պետական Դումայի համար

Թիֆլիսի Քաղաքային Ուպրավան սրանով յայտնում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ Թիֆլիսի նահանգապետը ներկայ հոկտեմբերի 14-ին նշանակել է լրացուցիչ ընտրութիւններ՝ Թիֆլիսի և Բօրչալուի գաւառների ռուսական կուրիայի քաղաքային ընտրողների համար Զուբալովի Ժողովրդ. Տանը, Կիրօչնայա փողոցի վրա, իսկ տեղական կուրիայի երրորդ բաժանմունքի համար Քաղ. Ուպրավայում, Երեւանեան հրապարակի վրա։

Ընտրողի անձնաւորութիւնը հաստատող վկայական կարող է ծառայել անուանական յայտարարութիւնը առանց կուպօնի, համաձայն Ներքին Գործերի Մինիստրութեան 1912 թ. օգոստոս 19 ի Հրահանգի 24-րդ յօդուածի։ Այն ընտրողները, որոնք որևէ պատճառով անուանական յայտարարութիւններ չեն ստացել կամ թէ կորցրած ունեն, կարող են դիմել Քաղաքային Ուպրավային՝ նորը ստանալու համար, ներկայացնելով այդ դէպքում, համաձայն Հրահանգի 19-րդ յօդուածի, իրանց անձնաւորութիւնը հաստատող վկայագիր՝ տրված ոստիկանութեան, հաշտարար դատաւորի, նօտարի, կամ թէ պետական, հասարակական և դասային հիմնարկութիւնների կողմից՝ եթէ ընտրողը ծառայութեան մէջ է։

Ընտրողական թերթերի համար տրված ծրարները՝ վաւերացված Քաղաքային Ուպրավայի կնիքով, եթէ կորցված են կամ փչացված, կարելի է ստանալ նորից Ուպրավայում, իսկ ընտրութիւնների օրը՝ ընտրական կօմմիսիայի շինութիւնը մտնելու ժամանակ (յօդ. 21-րդ)։

763. 1—1

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւնները

1) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I	գ. 1 ր. —
2) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրթնիք, I և II հատորներ	1 ր. 50
3) ՄԻ ԱՐԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեան	40 կ.
4) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօ, հատոր I, երկրորդ տպ.	1 ր. 20 կ.
5) ԴԻՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեան	10 կ.
6) ՏԱՆԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ, բժիշկ Փ. Բալխեան I հատոր, Առողջապահութիւն և անդամազննութիւն II » Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կանանց), դեղատոմս, բառարան	1 ր. 60 կ.
7) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ	15 կ.
8) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, [illegible], Հ. Առաքելեան	50 կ.
9) ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Փիլոռս Ամատունի	1 ր. —
10) ՑՈՒՑԱՆԻ [illegible], Արփիար Արփիարեան	40 կ.
11) ՄԻ ՀԻՔԻԱԹՆ ՄԻ ԳԻՐ (վիպագրութիւն), Ստ. Մալխասեանց	20 կ.
12) [illegible]	35 կ.
13) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարազարդ	15 կ.
14) ԱՆԳԼԻԱՅԻ [illegible] ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, [illegible]	15 կ.
15) ՃԱՊՈՆԻԱ կամ ծագող Արեւի երկիրը, Գ. Ի. Շէկլէեր	25 կ.
16) ՄԻԼՏՈՆԻ ԿԵԱՆՔԸ և գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեան	25 կ.
17) ԴԱԼԼԷՆԻ ԿԵԱՆՔԸ և գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեան	25 կ.
18) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀԻԱՑԱԾՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Մաշ. Բալթազարեան	80 կ.

Վերջինիս 19 հատը գնողը, որոնց ընդհանուր արժէքն է 11 ր. 60 կ., [illegible]

Նրանք, որոնք կը գնեն մեծ պահանջով վերոյիշեալ գրքերից մի-մի օրինակ [illegible] կը ստանան 30% զեղչ, իսկ նրանք, որոնք վերցնեն [illegible] կը ստանան 25%.

ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ. (6) 50—42

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный